

**ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
(ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹՈՒԹՅՈՒՆ**

2906

«ՏԱՆԻՔԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՅՈՒՄ»

«ՏԱՆԻՔԱԳՈՐԾ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ ԵՎ ՄՈԴՈՒԼԱՅԻՆ

ԾՐԱԳՐԵՐ

ԵՐԵՎԱՆ 2012

III. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՊԼԱՆԸ

Առարկաների անվանումը և մոդուլները	Առեստավորում ըստ կիսամյակների			Ուսանողի ուսումնական բեռնվածությունը (ժամ)				Բաշխումն ըստ կուրսերի և կիսամյակների					
	Քնն.	Ստուգաքք	Կուրս. աշխ.	Պարտադիր լսարանային բեռնվածություն				2-րդ կուրս		3-կուրս			
				Ընդ.	Այդ թվում			3-րդ կիս	4-րդ կիս	5-րդ կիս	6-րդ կիս		
					Տեսակ. ուսուց ում	Լաբոր. և գործ. աշխ.	Սեմին. պարապմունք	ամյակ,1 6 շաբաթ	ամյակ, 17 շաբաթ	ամյակ, 12 շաբաթ	ամյակ, 12 շաբաթ		
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ, ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ													
Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ		3,4տ		72	54	18				36	36		
Քաղաքագիտության և սոցիոլոգիայի հիմունքներ		4տ		18	12		6					18	
Իրավունքի հիմունքներ		4տ		36	28	8						6	3
Պատմություն		3տ		36	30		6			3	6		

Օտար լեզու		3,4տ		60	12	48				36	24		
Ֆիզիկական կուլտուրա		3.4տ		62	6	56				32	30		
ԸՆԴԱՄԵՆԸ				284	142	130				140	144		
ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ													
Էկոլոգիայի և լանդշաֆտագիտության հիմունքներ		4տ		36	30	6					36		
Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր		3տ		18	18					18			
ԸՆԴԱՄԵՆԸ				54	48	6				18	36		
ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ													
Հաղորդակցություն		3տ		36	10	26				36			
Անվտանգություն և առաջին օգնություն		3տ		36	20	16				36			
Համակարգչային օպերատորություն		4տ		72	18	54					72		
ԸՆԴԱՄԵՆԸ				144	48	96				72	72		
ԸՆԴՀԱՆՈՒՐ													

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ													
Շինարարական գծագրության հիմունքներ	3տ		54	16	38				54				
Նյութաբանություն	3տ		54	18	36				54				
Աշխատանքի պաշտպանություն	3տ		36	24	12				36				
ԸՆԴԱՄԵՆԸ			144	58	86				144				
ՀԱՏՈՒԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ													
Շինարարական գործ	3տ	3տ	54	18	36				54				
Գլանափաթեթավոր և մածիկային նյութերից ծածկույթների իրականացման տեխնոլոգիա	3տ		54	6	48				54				
Ոչ մետաղական թերթային և մանրահատավոր նյութերից ծածկույթների իրականացման տեխնոլոգիա	4տ	6տ	54	6	48					54			
Մետաղական նյութերից ծածկույթների իրականացման տեխնոլոգիա արարության տեխնոլոգիա	4տ		54	6	48					54			
Տանիքային ծածկույթների	4տ		54	6	48					54			

վերանորոգում													
Ատաղձագործական աշխատանքներ		3տ		36	8	28				36			
Փականագործական աշխատանքներ		3տ		36	8	28				36			
Ճոպանման աշխատանքներ		4տ		36	8	28					36		
Տանիքային նորագույն և ոչ ավանդական տեխնոլոգիաներ		4տ		36	18	18					36		
ԸՆԴԱՄԵՆԸ				414	84	330				180	234		
ԸՆՏՐՈՎԻ		3տ,4տ		36	18	18				12	24		
ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ԺԱՄԵՐ				40	20	20				10	30		
ԸՆԴԱՄԵՆԸ				1116	418	686		12		576	540		
ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ				100									
										36	36		

IV. ՆԱԽԱՍԻՐԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ			N	VII. ԱՆՀՐԱԺԵՇՏ ԿԱՔԻՆԵՏՆԵՐԻ, ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ, ԱՐՎԵՍԱՆՈՑՆԵՐԻ ՑԱՆԿԸ
				ԿԱՔԻՆԵՏՆԵՐ
Տարիքային հոգեբանություն				
Վարվելակերպը գործարար հարաբերություններում			1	Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքների
			2	Օտար լեզվի
			3	Աշխատանքի անվտանգության և առաջին օգնության
			4	Համակարգչային
			5	Տանիքային ծածկույթների տեխնոլոգիայի
			6	Գծագրության
V. ՊՐԱԿՏԻԿԱ	Կիսամյակ	Շաբաթ		
Ուսումնական	3	2		ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐ
				Նյութաբանության
				ԱՐՎԵՍԱՆՈՑՆԵՐ
				Տանիքագործական արհեստանոց՝ ատաղձագործական և փականագործական տեղամասերով
Մասնագիտական	4	5		ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ
Նախաավարտական	4	2	1.	Մարզադահլիճ
ԸՆԴԱՄԵՆԸ		9	2	Մարզահրապարակ

<p>Վ.ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍԱՎՈՐՈՒՄ</p> <p>Համալիր քննություն հատուկ մասնագիտական մոդուլներից / հոլիսի 13-ից հոլիսի 19-ը/</p>				

VIII. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

1. Ուսանողների գիտելիքների յուրացման մակարդակը

1. Ուսանողների գիտելիքների յուրացման մակարդակը ստուգելու, ինչպես նաև ուսումնառության արդյունավետությունը վերահսկելու նպատակով, հաստատության ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ կարող են անցկացվել առանձին առարկաների /մոդուլների/ ընթացիկ /միջանկյալ/ քննություններ, ստուգարքներ, ստուգողական աշխատանքներ: Ստուգարքներն, այդ թվում՝ տարբերակված, անցկացվում են առարկայի /մոդուլի/ համար սահմանված ժամերի հաշվին: Ըստ առարկաների /մոդուլների/՝ ստուգողական աշխատանքների թիվը հաստատում է ուսումնամեթոդական խորհուրդը: Քննությունների և ստուգարքների անցկացման կարգը սահմանում է ՀՀ կրթության և գիտության նախարարությունը:

2. Լաբորատոր աշխատանքների, օտար լեզուների, համակարգչային, գործնական, սեմինար, ֆիզիկական կուլտուրայի ,ինչպես նաև ուսումնամեթոդական խորհրդի կողմից երաշխավորված առանձին առարկաների /մոդուլների/ գծով ուսումնական պարապմունքների, կուրսային նախագծման և արհեստանոցներում արտադրական ուսուցման ժամանակ ուսումնական խումբը բյուջետային ֆինանսավորման դեպքում կարող է լինել քաղաքացիական ենթակառուցվածքի՝ յուրաքանչյուրում առնվազն 8 ուսանող՝ ելնելով ուսուցանվող առարկայի /մոդուլի/ յուրահատկությունից: Համապատասխան միջոցների առկայության պայմաններում ուսումնական պարապմունքները կարող են անցկացվել առանձին ուսանողների հետ /անհատական պարապմունքներ, ուսուցման անհատական ստեղծագործական ձևեր և այլն/: Ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ առանձին առարկաների /մոդուլների/ տեսական դասընթացը կարող է կազմակերպվել հոսքային պարապմունքի ձևով: Ուսումնամեթոդական խորհրդի որոշումներն ու երաշխավորությունները ուսումնական տարվա սկզբում քննարկում է քոլեջի խորհուրդը, հաստատում տնօրենը:

3. Նախասիրական առարկաները, դրանց ծավալը և ուսուցման ժամկետը,բայց ոչ ավելի, քան շաբաթը 4 ժամ, որոշում է քոլեջը: Ամբիոնների, առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների կողմից ներկայացված նախասիրական առարկաների ծրագիրը հաստատում է քոլեջի ուսումնամեթոդական խորհուրդը:

4. Ֆիզիկական կուլտուրայի առարկայական ծրագրով նախատեսված նյութը կարող է իրացվել նաև արտաուսումնական պարապմունքների տարբեր ձևերով՝ մարզական ակումբներում, սեկցիաներում, խմբակներում:

5. Ուսումնական գործընթացի ժամանակացույցը, ելնելով տեղական պայմաններից, կարելի է փոփոխել՝ պարտադիր պահպանելով տեսական և գործնական ուսուցման, մոդուլների ամփոփման, պրակտիկայի, արձակուրդի ընդհանուր տևողությունը:

6. Ամբիոնների, առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների ներկայացրած խորհրդատվությունների անցկացման ձևը հաստատում է ուսումնամեթոդական խորհուրդը:

7. Պետական կառավարման լիազորված մարմնի կողմից հանձնարարված փաստաթղթերի ուսումնասիրումը կատարվում է համապատասխան առարկաների ժամերի հաշվին:
8. Պահուստային ժամերը տնօրինում է քոլեջը՝ ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության սահմանած կարգի պահանջներին համապատասխան:
9. Ուսումնական պրակտիկան կարող է անցկացվել կենտրոնացված, կամ տեսական պարապմունքների հետ հաջորդաբար՝ պահպանելով պլանով նախատեսված ժամաքանակը: Պրակտիկայի անցկացման ժամկետը կարելի է տեղաշարժել ուսումնական տարվա նույն կիսամյակի ընթացքում: Պրակտիկայի յուրաքանչյուր ձև ավարտվում է հաշվետվությամբ՝ գնահատումով:
10. Նախաավարտական պրակտիկան անց է կացվում կենտրոնացված կարգով, ուսումնական պլանով նախատեսված ժամկետներում:
11. Քոլեջը, ելնելով անհրաժեշտությունից, կարող է ստեղծել լրացուցիչ կաբինետներ, մասնագիտացված լսարաններ:

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ»

Մոդուլի դասիչը	ԱՀ-Հ-5-11-001
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է զարգացնել սովորողի անձնական շփման ունակությունները, ակտիվացնել միջանձնային հաղորդակցության հնարավորությունները, ձևավորել աշխատանքային և մասնագիտական գործունեության ընթացքում նպատակային հաղորդակցման, գործնական կապերի ու հարաբերությունների ստեղծման կարողությունը:
Մոդուլի տևողությունը	36 ժամ տեսական ուսուցում՝ 10 ժամ գործնական աշխատանք՝ 26 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. <ol style="list-style-type: none"> 1. ներկայացնի հաղորդակցության դերն ու նշանակությունը անձնական և մասնագիտական նպատակների իրականացման համար, 2. կիրառի ուղղակի հաղորդակցման ձևերը, 3. կիրառի անուղղակի հաղորդակցման ձևերը, 4. ձևավորի և զարգացնի միջանձնային հաղորդակցում, 5. խթանի համագործակցության ձևավորմանը, շարունակական գործընկերության համար ստեղծի նախապայմաններ:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել հաղորդակցության դերն ու նշանակությունը անձնական և մասնագիտական նպատակների իրականացման համար
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է բացատրում հաղորդակցման անհրաժեշտությունը անձի ինքնադրսևորման և գործարար հաջողությունների համար,

	<ol style="list-style-type: none"> 2) ներկայացնում է շփման և անձնական հաղորդակցման ձևերը, բաղադրիչները, 3) ներկայացնում է գործնական հաղորդակցման եղանակները, բաղադրիչները, 4) շփման հնարավորությունը ուղղորդում է նպատակային հաղորդակցմանը, 5) անձնական հատկանիշները օգտագործում է գործնական հաղորդակցության մեջ:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և իրավիճակային խաղերի միջոցով:</p> <p>Ուսանողին կտրվեն հարցեր անձնական հաղորդակցման և շփման ձևերի, գործնական հաղորդակցման եղանակների ու դրանց բաղադրիչների վերաբերյալ: Կառաջադրվեն իրավիճակային խնդիրներ՝ նպատակային հաղորդակցման հնարավորությունները բացահայտելու համար: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես՝ հարց ու պատասխանը և թեստերը), նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և առաջադրված իրավիճակում օգտագործում է հնարավորությունները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված հարցաշարեր, իրավիճակային խնդիրներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Կիրառել ուղղակի հաղորդակցման ձևերը
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում ուղղակի հաղորդակցման ձևերը, 2) բանավոր հաղորդակցման ժամանակ վարում է զրույց, արձագանքում է հարցադրումներին, 3) հանդես է գալիս հաղորդումներով և զեկույցներով՝ ներկայացնում է հստակ և նպատակային խոսք, 4) ուղղակի հաղորդակցման ընթացքում հայտնում է տեսակետ, դրսևորում է հետաքրքրություններ, հաճոյախոսում է, 5) մասնակցում է դեբատների և բանավեճերի, պահպանում է համագործակցության շարունակականությունը:

Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և իրավիճակային խաղերի միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր ուղղակի հաղորդակցման ձևերի վերաբերյալ, հանձնարարվում է որոշակի թեմայի շուրջ զեկույց և հաղորդում պատրաստել, առաջադրվում է թեմատիկ քննարկումներ, որի ընթացքում ուսանողը հանդես է գալիս հնարավոր բոլոր դրսևորումներով: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես՝ հարց ու պատասխանը և թեստերը), նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին, խոսքը կառուցում է հստակ և նպատակային, կարողանում է արձագանքել ըստ իրավիճակի:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված քննարկման ենթակա թեմաներ, դերային խաղերի սցենարներ, հաղորդակցման տեխնիկական սարքեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Կիրառել անուղղակի հաղորդակցման ձևերը
	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում անուղղակի հաղորդակցման ձևերը, 2) կազմում և ձևակերպում է գրավոր խոսք՝ պահպանելով նպատակայնությունն ու էթիկան, 3) օգտագործում է տեղեկատվական տեխնոլոգիաները և այլ տեխնիկական միջոցները՝ նպատակային տեղեկատվությունը փոխանցելու համար, 4) կազմում է գրություններ՝ ըստ հասցեատիրոջ և նպատակի, 5) վարում է տեղեկատվության հավաքագրման և փոխանցման փաստաթղթեր, 6) բանավոր հաղորդակցման նյութը փոխարկում է գրավորի, 7) գրավոր հաղորդակցման նյութը փոխարկում է բանավոր հակիրճ նյութի:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և իրավիճակային առաջադրանքների միջոցով:

	<p>Ուսանողին կտրվեն հարցեր անուղղակի հաղորդակցման ձևերի վերաբերյալ, կհանձնարարվի որոշակի թեմայի շուրջ կազմել տեքստ՝ հաշվի առնելով հասցեատիրոջը, կառաջադրվի թեմա, որի վերաբերյալ տարբեր աղբյուրներից հավաքագրվում, ամբողջացվում և փոխանցվում է տեղեկատվությունը, կհանձնարվի բանավոր հակիրճ միտքը վերածել գրավոր ամբողջական տեքստի, իսկ ամբողջական ծավալուն տեքստից առանձնացնել առաջնային ինֆորմացիան և ներկայացնել հակիրճ խոսքով: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես՝ հարց ու պատասխանը, թեստերը), նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և 80% ճշգրտությամբ կատարում է հանձնարարությունները:</p>
<p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p>	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված քննարկման ենթակա թեմաներ, դերային խաղերի սցենարներ, հաղորդակցման տեխնիկական սարքեր:</p>
<p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</p>	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>
<p>Ուսումնառության արդյունք 4</p>	<p>Ձևավորել և զարգացնել միջանձնային հաղորդակցում</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<ol style="list-style-type: none"> 1) նախաձեռնում է անձնական և աշխատանքային շփում՝ ըստ իրավիճակի և գրուցակցի կամ հաստեատիրոջ, 2) ստանում, մշակում և դասակարգում է անհրաժեշտ (նպատակային) տեղեկատվությունը, 3) առկա տեղեկատվությունն օգտագործում է միջանձնային հաղորդակցում ձևավորելու համար, 4) օգտագործում է հաղորդակցման հնարքները և տեխնոլոգիաները՝ հետաքրքրություն առաջացնելու և շահադրդելու համար, 5) ներգրավվում է երկխոսություններում, քննարկումներում, հայտնում է կարծիք, հիմնավորում է տեսակետներ, 6) պահպանում և եզրափակում է երկխոսությունը, 7) կարողանում է հաղորդակցվել՝ հաշվի առնելով իրավիճակը և ունկնդրի հետաքրքրությունները:

Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական աշխատանքների և իրավիճակային խաղերի միջոցով: Ուսանողին կհանձնարարվի գործնական աշխատանքներ որոշակի տեղեկատվություն ստանալու, մշակելու և դասակարգելու համար: Կառաջադրվի իրավիճակային խաղեր՝ անձնական շփում նախաձեռնելու, երկխոսության կողմ լինելու, զրույցը պահպանելու և եզրափակելու կարողությունները դիտարկելու, գնահատելու համար: Նույն առաջադրանքը կհանձնարարվի աշխատանքային շփումների համար: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես՝ հարց ու պատասխանը և թեստերը), նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ընդհանուր առմամբ ճիշտ է կատարում հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ, սցենարներ, դերային խաղերի սցենարներ, հաղորդակցման տեխնիկական սարքեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 5.	Խթանել համագործակցության ձևավորումը, ստեղծել նախապայմաններ շարունակական գործընկերության համար
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է համագործակցությանը խթանող միջոցառումները (գովազդ, հայտարարություններ, ցուցահանդեսներ և այլն), 2) հավանական գործընկերոջ վերաբերյալ հավաքագրում է անհրաժեշտ տեղեկատվությունը, 3) հավաքագրված տեղեկատվությունն օգտագործում է գործարար հաղորդակցում ձևավորելու համար, 4) օգտագործում է հաղորդակցման հնարքները և տեխնոլոգիաները՝ հետաքրքրություն առաջացնելու և շահադրդելու համար, 5) հաղորդակցման ընթացքում ձեռք է բերում վստահություն, 6) ապահովում է հետադարձ կապի միջոցառումներ:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական աշխատանքների և իրավիճակային խաղերի միջոցով: Թեստերի

	<p>միջոցով ստուգվում է համագործակցությունը խթանող միջոցառումների իմացությունը, և կոնկրետ դեպքերի համար դրանց կիրառման առավել նպաստավոր տարբերակները: Կհանձնարարվի հավաքագրել որոշակի գործընկերոջ վերաբերյալ տեղեկատվություն և օգտագործել գործարար հաղորդակցում ձևավորելու համար: Կառաջադրվի իրավիճակային խաղեր՝ գործնական հաղորդակցում նախաձեռնելու, համագործակցության հասնելու և հետադարձ կապ ապահովելու համար: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր, մասնավորապես՝ հարց ու պատասխանը, թեստերը, նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից:</p> <p>Արդյունիքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ընդհանուր առմամբ ճիշտ է կատարում հանձնարարությունները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ, սցենարներ, դերային խաղերի սցենարներ, հաղորդակցման տեխնիկական սարքեր:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ</p>

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ԱՀ-ԱԱՕ-5-11-001
Մոդուլի նպատակը	<p>Սովորողի մոտ ձևավորել աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոնները պահպանելու, սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան կենցաղը և աշխատանքը կազմակերպելու, հավանական վտանգները և վթարները կանխարգելելու, արտադրական վթարների դեպքում անվտանգության միջոցառումներ իրականացնելու և առաջին օգնություն ցուցաբերելու կարողություններ:</p>
Մոդուլի տևողությունը	<p>36 ժամ տեսական ուսուցում՝ 20 ժամ գործնական աշխատանք՝ 16 ժամ</p>
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:

Ուսումնառության արդյունքները	<p>Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է.</p> <ol style="list-style-type: none"> 1. ներկայացնի աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոնները, 2. կազմակերպի կենցաղը և աշխատանքը սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան, 3. կանխի հավանական վտանգները և վթարները, իրականացնի անվտանգության միջոցառումներ, 4. ցուցաբերի առաջին օգնություն:
Մոդուլի գնահատման կարգը	<p>Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարարմակարգակի ապահովումն է:</p>
Ուսումնառության արդյունք 1	<p>Ներկայացնել աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոնները</p>
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1. ճիշտ է բացատրում անվտանգության կանոնների սահմանման, իրավական կարգավորման և պահպանման անհրաժեշտությունը, 2. ըստ հիմնական բնագավառների ճիշտ է ներկայացնում անվտանգության կանոնների պահանջները, 3. ճիշտ է ներկայացնում տեխնոլոգիական սարքավորումների շահագործման անվտանգության կանոնները, 4. ճիշտ է ներկայացնում հրդեհային անվտանգության և հակահրդեհային պաշտպանության կանոնները, 5. ճիշտ է ներկայացնում էլեկտրաանվտանգության կանոնները, 6. ներկայացնում է անվտանգության կանոնների խախտման հետևանքները, պատասխանատվությունները:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր անվտանգության հիմնական կանոնների, պահպանման անհրաժեշտության և չափանիշներին դեպքում դրանց հետևանքների վերաբերյալ: Կհանձնարարվի որոշակի բնագավառի (աշխատավայրի) համար ներկայացնել անվտանգության կանոնների առանձնահատկությունները, համեմատել առնվազն երկու բնագավառ:</p> <p style="text-align: center;">Ստորև ներկայացվում է արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները՝</p> <p>անվտանգության հիմնական կանոնները՝ ըստ տարբեր մասնագիտական աշխատատեղերի, տեխնոլոգիական սարքավորումների շահագործման անվտանգության կանոնները, դրանց խախտման հետևանքները, պատասխանատվությունը,</p>

	<p>հրդեհային անվտանգության և հակահրդեհային պաշտպանության կանոնները, դրանց խախտման հետևանքները, պատասխանատվությունը,</p> <p>էլեկտրաանվտանգության կանոնները, դրանց խախտման հետևանքները, պատասխանատվությունը:</p> <p>կենցաղային հիմնական սարքերի անվտանգության կանոնները:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:</p>
<p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p>	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ անվտանգության կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ:</p>
<p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</p>	<p>տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 4 ժամ</p>
<p>Ուսումնառության արդյունք 2</p>	<p>Կազմակերպել կենցաղը և աշխատանքը սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է մարդու առողջության և աշխատանքի ընթացքում աշխատունակության վրա ազդող գործոնները (սանիտարահիգիենիկ, հոգեբանաֆիզիոլոգիական, էսթետիկական, սոցիալական-հոգեբանական), 2) ներկայացնում է աշխատավայրի սանիտարիայի և հիգիենայի ընդհանուր նորմերը (միկրոկլիման, ճառագայթումը, լուսավորվածությունը, տատանումները և այլն), 3) ներկայացնում է աշխատանքի համար անհրաժեշտ նյութերը և դրանց անվնաս օգտագործումը, 4) ներկայացնում է սանիտարիայի և հիգիենայի պահպանման համար անհրաժեշտ միջոցառումները:
<p>Գնահատման միջոցը</p>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր աշխատունակության վրա ազդող գործոնների, սանիտարահիգիենիկ նորմերի և դրանց պահպանման պահանջների վերաբերյալ: Կհանձնարարվի ներկայացնել որոշակի, կոնկրետ իրավիճակից բխող սանիտարիայի և հիգիենայի պահպանման, ինչպես նաև անհրաժեշտ աշխատանքային կամ կենցաղային նյութերի անվնաս</p>

	<p>օգտագործմանն ուղղված միջոցառումներ:</p> <p>Արդյունիքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ անվտանգության կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ և իրավիճակային խնդիրներ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ</p> <p>գործնական աշխատանք՝ 4 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 3	<p>Կանխել հավանական վտանգները և վթարները, իրականացնել անվտանգության միջոցառումներ</p>
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է կենցաղային և արտադրական վթարների առաջացման պատճառները և հետևանքները, 2) ներկայացնում է արտադրական վթարների կանխման աշխատանքները, 3) ներկայացնում է առանձին խմբերի (հաշմանդամություն ունեցող անձինք, հղիներ, անչափահասներ և այլն) աշխատանքային առանձնահատուկ պայմանները և վտանգների կանխման սահմանված միջոցառումները, 4) ներկայացնում է կենցաղային և արտադրական վթարների ու դժբախտ պատահարների փաստաթղթային ձևակերպումների կարգը:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով:</p> <p>Ուսանողին կտրվեն հարցեր կենցաղային և արտադրական վթարների առաջացման պատճառների ու հետևանքների, դրանց կանխարգելմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ: Կհանձնարարվի ներկայացնել որոշակի խմբերի համար սահմանված աշխատանքային պայմանների ապահովման և կոնկրետ վտանգի կանխարգելմանն ուղղված միջոցառումներ:</p> <p>Կառաջադրվի կոնկրետ կենցաղային վթարի կամ պատահարի համար ներկայացնել փաստաթղթային ձևակերպումներ բաղադրիչները:</p> <p>Արդյունիքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում</p>

	հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ անվտանգության կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ և իրավիճակային խնդիրներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 2 ժամ
Ուսումնառության արդյունք 4	Ցուցաբերել առաջին օգնություն
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) տիրապետում է տարբեր իրավիճակներում առաջին օգնության հիմնական կանոններին, 2) ճիշտ է ներկայացնում առաջին օգնության գործողությունների քայլերը, 3) կատարում է արհեստական շնչառության և սրտի աշխատանքի վերականգնման գործողություն, 4) կատարում է արյան հոսքի դադարեցման և բաց վնասվածքների վիրակապման գործողություն, 5) կատարում է այրվածքների նախնական մշակման և էլեկտրահարվածին առաջին օգնություն ցուցաբերելու գործողություններ, 6) կատարում է վիրակապման և անշարժացման գործողություն՝ տարբեր կոտրվածքների դեպքում, 7) ներկայացնում է տարբեր թունավորման դեպքերում առաջին օգնության կազմակերպման գործողությունները:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր առաջին օգնության հիմնական կանոնների և գործողությունների վերաբերյալ: Կհանձնարարվի ցուցադրել (անհնարինության դեպքում՝ նկարագրել) առաջին օգնության գործողություններ՝ ըստ դեպքերի: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր, մասնավորապես՝ հարց ու պատասխանը, թեստերը, նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում բոլոր հանձնարարությունները:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ անվտանգության կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ և իրավիճակային խնդիրներ, առաջին օգնության համար անհրաժեշտ միջոցներ, նյութեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 6 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ԱՀ-ՀՕ-5-11-001
Մոդուլի նպատակը	Զարգացնել սովորողի համակարգչային տեխնիկայից օգտվելու և դրա ծրագրային հնարավորությունները կիրառելու առաջնային կարողությունները, աշխատանքային գործունեության ընթացքում և անձնական կարիքների շրջանակներում կիրառել համակարգչային օպերացիոն համակարգերի , գրասենյակային փաթեթների (Microsoft Office) ծրագրերը, կատարելագործել համացանցից օգտվելու կարողությունները և տեղեկատվական բազաների հետ նպատակային աշխատելու հմտությունները
Մոդուլի տևողությունը	72 ժամ տեսական ուսուցում՝ 18 ժամ գործնական աշխատանք՝ 54 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է. <ol style="list-style-type: none"> 1) տիրապետի համակարգչային տեխնիկային և կիրառի օպերացիոն համակարգը, 2) խմբագրի և ֆորմատավորի տեքստերը, 3) պատրաստի և խմբագրի աղյուսակները, 4) կատարի գրաֆիկական խմբագրում և նկարագարում, 5) կազմակերպի ցուցադրություն համակարգչային ծրագրերով,

	6) աշխատի համացանցում:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարարման կարգակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Համակարգչային տեխնիկայի տիրապետում և օպերացիոն համակարգի կիրառում
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) տիրապետում է համակարգչի հիմնական և լրացուցիչ բաղադրիչներին, 2) տիրապետում է միացնելու, օգտագործելու և անջատելու տեխնիկական պայմաններին, 3) տիրապետում է համակարգչային օժանդակ տեխնիկական սարքերին (printer, scanner, projector, fax, պատճենման սարք և այլն), 4) ներկայացնում է օպերացիոն համակարգի պատուհանային կառուցվածքը, 5) ներկայացնում է կիրառվող հիմնական ծրագրերը (microsoft office), 6) կարողանում է բացել առաջադրված թղթապանակը և ֆայլը, 7) օգտվում է պատուհանային մենյուի հիմնական հրամաններից, 8) ստեղծում է նոր թղթապանակ ու ֆայլ, պահպանում, բացում, փակում և տեղադրում է առաջադրված վայրում 9) կատարում է առաջադրված փաստաթղթի տպագրում (Print)
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր համակարգչի հիմնական և լրացուցիչ բաղադրիչների, օժանդակ տեխնիկական սարքերի, դրանց կիրառման և նշանակության մասին: Կհանձնարարվի միացնել համակարգիչը և դրան կից օժանդակ տեխնիկական սարքերը, օգտագործել ծրագրային հնարավորությունները՝ համաձայն առաջադրանքի: Ուսանողին կառաջադրվեն առնվազն 3 հիմնական ծրագրում կատարել նույն գործողությունը. թղթապանակ և ֆայլ բացելու, պատուհանային մենյուի հիմնական հրամաններից օգտվելու, ստեղծված ֆայլը պահպանելու, փակելու, առաջադրված վայրում տեղադրելու և տպագրելու գործողություն:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:</p>

Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր, համակարգչային օժանդակ տեխնիկական սարքեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 8 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Տեքստերի խմբագրում և ֆորմատավորում
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) կարողանում է ծրագրերը պատրաստել հայերեն և օտար լեզվով տեքստ մուտքագրելու համար, 2) մուտքագրում է տեքստ, մեծատառ նշաններ, սիմվոլներ, թվանշաններ, 3) կարողանում է տեղաշարժել տեքստային ցուցիչը տեքստի մեջ կատարելով ուղղումներ, ջնջումներ, լրացումներ, 4) կատարում է մուտքագրված տեքստի պարզագույն ֆորմատավորում՝ փոխելով տողերի դասավորությունը, միջտողային տարածությունները, տեքստի գունային ֆոնը, պարբերության խորությունները լուսանցքներից, 5) կարողանում է տեքստին կից ներմուծել նկարներ, գրաֆիկներ, աղյուսակներ, անհիմացիաներ և այլն:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի նախապատրաստել ծրագիրը՝ ըստ առաջադրանքի տեքստեր մուտքագրելու, ձևավորելու, խմբագրելու տեքստը հավելելու գործողություններ՝ առնվազն 3 հիմնական ծրագրում կատարելով նույն գործառույթը: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 2 ժամ գործնական աշխատանք՝ 6 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Աղյուսակների պատրաստում և խմբագրում

Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է աղյուսակներ կազմելու համապատասխան ծրագրերը և նախապատրաստում դրանք, 2) կազմում է աղյուսակ առաջադրված չափերով և մուտքագրում տվյալներ, 3) կատարում է ուղղումներ ու լրացումներ աղյուսակում (տվյալներ, տողեր, սյուններ և այլն) 4) փնտրում և գտնում է տվյալներ աղյուսակում, 5) ստեղծում է պարզ ֆունկցիոնալ կախվածություն տվյալների մեջ:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի նախապատրաստել ծրագիրը՝ ըստ առաջադրանքի աղյուսակ կազմելու, ձևավորելու, խմբագրելու, տվյալներ մուտքագրելու, աղյուսակային տվյալները հավելելու և տվյալների ֆունկցիոնալ կախվածություն ստեղծելու գործողություններ՝ առնվազն 2 հիմնական ծրագրում կատարելով նույն գործառույթը: Ֆունկցիոնալ կախվածության օրինակ կարող է հանդիսանալ թվաբանական գործողությունների ամփոփումը, վերափոխումը (օրինակ՝ տոկոսի վերածելը) և այլն: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 10 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 4	<p>Գրաֆիկական խմբագրում և նկարազարդում</p>
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) գծագրում է գրաֆիկական օբյեկտներ, 2) գծագրում է գրաֆիկական օբյեկտներ՝ օգտագործելով Autoshapes պատուհանի պատրաստի ձևերը, 3) գծագրում է կանոնավոր պատկերներ, 4) ֆորմատավորում է գրաֆիկական օբյեկտները՝ տեղափոխելով, պատճենելով, պտտելով և չափերը փոխելով, 5) խմբավորում է գրաֆիկական օբյեկտները,

	<p>6) գծագրում է տեքստային բլոկներ,</p> <p>7) կատարում է գրաֆիկական օբյեկտների գունաերանգավորում:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի նախապատրաստել ծրագիրը՝ ըստ առաջադրանքի գրաֆիկական օբյեկտներ, կանոնավոր պատկերներ, տեքստային բլոկներ գծագրելու, խմբագրելու, տվյալներ մուտքագրելու, խմբավորելու, ձևավորելու գործողություններ՝ առնվազն 3 հիմնական ծրագրում կատարելով նույն գործառույթը:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>գործնական աշխատանք՝ 8 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 5	<p>Ցուցադրության կազմակերպում համակարգչային ծրագրերով</p>
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է ցուցադրական ծրագրերը և դրանց պատուհանի կառուցվածքը, 2) մուտքագրում է տեքստ, թվային արժեքներ և կատարում պարզ գործողություններ, 3) ներբեռնում է նկարներ, տեսանյութեր, անիմացիաներ, տվյալներ՝ աղյուսակի, գրաֆիկի տեսքով, 4) կարողանում է առաջադրված թեմայով պատրաստել ավարտուն փաստաթուղթ ցուցադրության համար, 5) ցուցադրում է պատրաստված տեղեկատվական նյութը:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի օգտվելով պատուհանային կառուցվածքից նախապատրաստել ցուցադրական ծրագիրը՝ թվային և տեքստային տվյալներ մուտքագրելու, խմբագրելու, նկարներ, տեսանյութեր, անիմացիաներ, աղյուսակային և գրաֆիկական տվյալներ ներբեռնելու, ձևավորելու գործողություններ՝ առնվազն 2 հիմնական ծրագրում կատարելով նույն գործառույթը:</p>

	<p>Կառաջադրվի ազատ թեմայի ներկայացման համար պատրաստել ցուցադրություն և ներկայացնել՝ պահպանելով թեմայի տրամաբանական կապն ու հաջորդականությունը:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>Տեսական ուսուցում՝ 4 ժամ</p> <p>Գործնական պարապմունք՝ 8 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 6	<p>Աշխատել համացանցում</p>
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է «համացանց» հասկացությունը, 2) օգտագործում է ինտերնետային հիմնական ծրագրերը, 3) ներկայացնում է History, Favorites, Stop, Refresh հրամանների, Back և Forward կոճակների նշանակությունը, 4) փնտրում է առաջադրված տվյալները համացանցի տեղեկատվական բազաներում (որոնողական և բաց ցանցերից), 5) կարողանում է համացանցից ներբեռնել, պահպանել և օգտագործել տեղեկությունները, 6) գրանցվում է էլեկտրոնային փոստում, ինտերնետային ծրագրերում և այլ կայքերում, 7) օգտագործում է էլեկտրոնային փոստի հնարավորությունները, ուղարկում և ստանում ինֆորմացի (հաղորդագրություն, նամակ և կցորդ):
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով:</p> <p>Ուսանողին կհանձնարարվի ներկայացնել համացանցի կառուցվածք, օգտագործման նպատակների բազմազանությունը, համացանցի միջոցով կարգավորման ենթա հնարավոր հարցերը: Ուսանողին կհանձնարարվի մուտք գործել ինտերնետային ծրագիր՝ փնտրել առաջադրված տվյալները, ներբեռնել, օգտագործել և պահպանել տվյալներ: Կառաջադրվի որոշակի տեղեկատվություն փոխանցել սոցիալական կայքերի միջոցով կամ բաշխել ըստ հասցեականության:</p>

	Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	տեսական ուսուցում՝ 4 ժամ գործնական աշխատանք՝ 10 ժամ

**Նախնական մասնագիտական (արհեստագործական) 2906 «ՏԱՆԻՔԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ »
մասնագիտության հիմնական կրթական ծրագրի ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական
կարողությունների մոդուլներ**

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԳԾԱԳՐՈՒԹՅԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	SՔԳ 3 -12 – 001
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել աշխատանքային գծագրեր, սխեմաներ, էսքիզներ կարդալու, հասկանալու համար անհրաժեշտ գիտելիքներ և կարողություններ:
Մոդուլի տևողությունը	54 ժամ Տեսական ուսուցում՝ 16 ժամ Գործնական աշխատանք՝ 38 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլը ուսումնասիրելու համար նախնական հմտություններ և կարողություններ չեն պահանջվում:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլն յուրացնելուց հետո սովորողը պետք է կարողանա. <ol style="list-style-type: none"> 1) ներկայացնել պրոյեկցիաների մեթոդը, 2) ներկայացնել շինարարական գծագրերի պայմանական նշանակումները, 3) կարդալ և մեկնաբանել գծագրեր, էսքիզներ, սխեմաներ, 4) ներկայացնել շինարարական գծագրության պարզագույն կանոնները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել պրոյեկցիաների մեթոդը
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում պրոեկցիաների առաջացումը, դրանց պրոեկտման եղանակները և տեսակները,

	<p>2) ճիշտ է ներկայացնում հատվածի պրոեկտումը, տարածության մեջ կետի և ուղիղ գծի փոխադարձ դիրքը, ուղիղ գծերի փոխադարձ դիրքը,</p> <p>3) տիրապետում է պրոեկցիաների երեք հարթությունների վրա կետի պրոեկտման հմտություններին,</p> <p>4) տիրապետում է պրոեկցիաների երեք հարթությունների վրա հատվածի պրոեկտման հմտություններին,</p> <p>5) կարող է որոշել կետի կոորդինատները,</p> <p>6) կարող է կառուցել երրորդ պրոեկցիան ըստ տրված երկուսի,</p> <p>7) կարող է կառուցել պարզ երկրաչափական պատկերների պրոեկցիաները հարթության վրա:</p>
Փնահատման միջոց	<p>Սովորողին կհանձնարարվի անհատական առաջադրանք, որը բաղկացած կլինի հետևյալ խնդիրներից՝</p> <p>1) կատարել հատվածի պրոյեկտում պրոյեկցիաների երեք հարթությունների վրա,</p> <p>2) որոշել տրված կետի կոորդինատները,</p> <p>3) կառուցել երրորդ պրոյեկցիա ըստ տրված երկուսի,</p> <p>4) կառուցել որևէ պարզ երկրաչափական պատկերի պրոյեկցիաներ հարթությունների վրա:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, եթե առաջադրանքի առնվազն 3 կետերը կատարված են անսխալ:</p>
Մեթոդաբանությունը եվ ռեսուրսները	<p>Տեսական ուսուցում և գործնական աշխատանք: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական և մեթոդական գրականություն, գծագրության պարագաներ, ցուցադրական նյութեր: Ուսուցումն իրականացնել գծագրության կաբինետում:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>Տեսական ուսուցում՝ 4 ժամ</p> <p>Գործնական պարապմունք՝ 10 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել շինարարական գծագրերի պայմանական նշանակումները
Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է ներկայացնում հավաքական շինարարական գծագրերում կիրառվող առանձին տարրերի (առանցքներ, միջնորմեր, պատուհաններ, դռներ, սանհանգույցներ, սանդղաբազուկներ, վերելակներ և այլն) պայմանական նշանակումները,</p>

	<p>2) ճիշտ է ներկայացնում հավաքական շինարարական գծագրերում պատկերված կրող կմախքային կառուցվածքները՝ սյուները, հեծանները, սալերը, պատերը,</p> <p>3) ճիշտ է ներկայացնում շինարարական գծագրերի չափադրման ձևերը, հստակ պատկերացնում է մասշտաբ հասկացությունը և գիտի շինարարական գծագրերում կիրառվող հիմնական մասշտաբները,</p> <p>4) ճիշտ է ներկայացնում շինարարական գծագրերին առաջադրվող տեխնիկական պայմանները:</p>
Գնահատման միջոց	<p>Սովորողին կհանձնարարվի անհատական առաջադրանք, որտեղ պատկերված կլինի որևէ բնակելի տան հատակագիծ, կնշվեն մասշտաբը և սխեմատիկորեն բացվածքները:</p> <p>Ուսանողը պետք է՝</p> <ol style="list-style-type: none"> 1) կառուցի հատակագիծը առանցքային ցանցում, 2) տեղադրի իրական չափերը, 3) պատկերի դռներն ու պատուհանները սահմանված պայմանական նշաններով, 4) որոշի պատերի և միջնորմերի հաստությունը: <p>Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, եթե առաջադրանքը կատարված է ճիշտ՝ առանց էական թերությունների:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Տեսական ուսուցում և գործնական աշխատանք: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական և մեթոդական գրականություն, գծագրության պարագաներ, ցուցադրական նյութեր: Ուսուցումն իրականացնել գծագրության կաբինետում:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>Տեսական ուսուցում՝ 4 ժամ</p> <p>Գործնական պարապմունք՝ 10 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 3	Կարողում և մեկնաբանում է գծագրեր, էսքիզներ և սխեմաներ
Կատարման չափանիշները	<ol style="list-style-type: none"> 1) տարբերում է շինարարական գծագրերը, էսքիզները, սխեմաները, 2) կարողում և մեկնաբանում է շինարարական գծագրերի մասնագրերը, գտնում է հատակագծերում,

	<p>ճակատներում և կտրվածքներում նշված հանգույցների գծագրերը,</p> <p>3) ինքնուրույն կատարում է պարզագույն էսքիզներ և սխեմաներ:</p>
Գնահատման միջոց	<p>Սովորողին կտրվեն երեք տարբեր կառույցների հատակագծեր, կտրվածքներ, ճակատներ, հանգույցներ / խառնված վիճակում / և կառաջադրվի՝</p> <ol style="list-style-type: none"> 1) առանձնացնել նույն կառույցի հատակագիծը, կտրվածքը, ճակատը, 2) գտնել առանձնացված կտրվածքի կամ ճակատի վրա նշված հանգույցների գծագրերը, 3) պատկերել հանգույցներից մեկի էսքիզը: <p>Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, եթե առաջադրանքը կատարված է ճիշտ՝ առանց էական թերությունների:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Տեսական ուսուցում և գործնական աշխատանք: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական և մեթոդական գրականություն, գծագրության պարագաներ, ցուցադրական նյութեր, տարբեր կառույցների հատակագծեր, ճակատներ, կտրվածքներ, հանգույցներ: Ուսուցումն իրականացնել գծագրության կաբինետում:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>Տեսական ուսուցում՝ 4 ժամ</p> <p>Գործնական պարապմունք՝ 8 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 4	<p>Ներկայացնել շինարարական գծագրության պարզագույն կանոնները</p>
Կատարման չափանիշները	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում կտրվածք և հատույթ հասկացությունները, 2) ճիշտ է ներկայացնում շինարարական հատակագծի նշանակությունը և կառուցման կանոնները, 3) ինքնուրույն կատարում է պարզ շինարարական հատակագծեր, 4) ճիշտ է ներկայացնում շինարարական կտրվածքի նշանակությունը և կառուցման կանոնները, 5) ինքնուրույն կատարում է պարզ շինարարական կտրվածքներ, 6) ճիշտ է ներկայացնում շինարարական ճակատի նշանակությունը և կառուցման կանոնները,

	7) ինքնուրույն կատարում է պարզ շինարարական ճակատներ:
ԳՆԱԿԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ	Սովորողին կհանձնարարվի անհատական առաջադրանք, որտեղ պատկերված կլինի որևէ բնակելի տան պարզ հատակագիծ և ճակատ: Սովորողը պետք է՝ 1) կառուցի կտրվածք՝ հատակագծում պայմանական նշաններով տրված դիրքին համապատասխան, 2) տեղադրի չափերը, 3) նշի հարկերի մակարդակի նիշերը ըստ ճակատի համապատասխան նիշերի:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Տեսական ուսուցում և գործնական աշխատանք: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական և մեթոդական գրականություն, գծագրության պարագաներ, ցուցադրական նյութեր, ճարտարապետական հատակագծեր, ճակատներ: Ուսուցումն իրականացնել գծագրության կաբինետում:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 4 ժամ Գործնական պարապմունք՝ 10 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՆՅՈՒԹԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ՏԲԳ 3-12-002
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել գիտելիքներ շինարարական նյութերի և իրերի տեսակների, հատկությունների, մակնիշավորման սկզբունքների, կիրառելիության բնագավառների վերաբերյալ և դրանք գործնականում օգտագործելու կարողություններ:
Մոդուլի տևողությունը	54 ժամ տեսական ուսուցում՝ 18 ժամ գործնական աշխատանք՝ 36 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:

<p>Ուսումնառության արդյունքները</p>	<p>Այս մոդուլը յուրացնելուց հետո սովորողը պետք կարողանա՝</p> <ol style="list-style-type: none"> 1) ներկայացնել շինարարական նյութերի դասակարգումը, ներկայացվող տեխնիկաշահագործական պահանջները, կիրառության բնագավառները և հիմնական հատկությունները, 2) ներկայացնել խեցեգործական նյութերի կառուցվածքը, տեսակները, ֆիզիկամեխանիկական հատկությունները, արատները, խեցեգործական նյութերից շինվածքները, նրանց տարատեսակները, կիրառելիության բնագավառը, ներկայացվող պահանջները, 3) ներկայացնել մետաղների և մետաղական իրերի ընդհանուր բնութագիրը, դասակարգումը, տարատեսակները, հատկությունները, կոռոզիան և պաշտպանումը նրանից, տեղափոխման ու պահպանման կանոնները, կիրառության բնագավառը, 4) ներկայացնել կապակցանյութերի ընդհանուր բնութագիրը, տեսակները, նրանց դասակարգումը, տարատեսակները, կազմությունը, որակի նկատմամբ տեխնիկական պահանջները, հատկությունները, պնդացումը, տեղափոխման, պահպանման կանոնները, կիրառելիության պահանջները, 5) ներկայացնել շինարարությունում կիրառվող բետոնների և շաղախների տեսակները և հատկությունները, տիրապետել ցեմենտային շաղախ և բետոն պատրաստելու հմտություններին, 6) ներկայացնել մեկուսիչ նյութերի բնութագրերը, տեսակները, հատկությունները, գործածության ժամանակ նրանց նկատմամբ ներկայացվող պահանջները, կիրառության բնագավառը:
<p>Մոդուլի գնահատման կարգը</p>	<p>Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:</p>
<p>Ուսումնառության արդյունք 1</p>	<p>Ներկայացնել շինարարական նյութերի դասակարգումը, ներկայացվող տեխնիկաշահագործական պահանջները, կիրառության բնագավառները և հիմնական հատկությունները:</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում շինարարական նյութերի և իրերի նշանակությունը շինարարական աշխատանքների արդյունավետության բարձրացման գործընթացում, նրանց դասակարգումը, որակի նկատմամբ պահանջները,

	<p>2) ճիշտ է մեկնաբանում շինարարական նյութերի հիմնական հատկությունները,</p> <p>3) ճիշտ է մեկնաբանում շինարարական նյութերի կիրառելիության բնագավառը՝ ելնելով նրանց հիմնական հատկություններից և ներկայացվող տեխնիկաշահագործական պահանջներից:</p>
Գնահատման միջոց	Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական արդյունքի միջոցով: Սովորողին կտրվի կոնկրետ գործնական առաջադրանք, ըստ որի նա պետք է որոշի հանձնարարված նյութի ֆիզիկամեխանիկական հատկությունները՝ իրական խտությունը, ծակոտկենությունը, ջրակլանումը, ամրությունը և այլն: Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, եթե գործնական առաջադրանքը կատարվել է ճիշտ, կամ թույլատրելի շեղումներով: Հարց ու պատասխանի դեպքում՝ թույլատրելի են ոչ էական բացթողումներ և անճշտություններ:
Մեթոդաբանությունը եվ ռեսուրսները	Տեսական ուսուցում և լաբորատոր պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտացված լաբորատորիա՝ անհրաժեշտ սարքավորումներով և նյութերով: Տեսական ուսուցման համար անհրաժեշտ է ուսումնական և մեթոդական գրականություն, առաջարկելի է տեսաֆիլմերի, ցուցապաստառների ցուցադրումը համակարգչով կամ թվային պրոյեկտորով: Անհրաժեշտ է պահպանել անվտանգության տեխնիկայի և սանիտարիայի կանոնները:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 2 ժամ Գործնական պարապմունք՝ 6 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել խեցեգործական նյութերի կառուցվածքը, տեսակները, ֆիզիկամեխանիկական հատկությունները, արատները, խեցեգործական նյութերից շինվածքները, նրանց տարատեսակները, կիրառելիության բնագավառը, ներկայացվող պահանջները:
Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է ներկայացնում խեցեգործական նյութերի կառուցվածքը, բնութագիրը, տեսակները, ֆիզիկամեխանիկական հատկությունները</p> <p>2) ճիշտ է ներկայացնում խեցեգործական նյութերից շինվածքները, նրանց դասակարգումը, տարատեսակները և առանձնահատկությունները,</p>

	<p>3) կարողանում է արտաքին զննումից գնահատել խեցեգործական կղմինդրի որակը և լաբորատոր փորձական միջոցով որոշել նրա ֆիզիկամեխանիկական հատկությունները,</p> <p>4) ճիշտ է նկարագրում խեցեգործական շինվածքների կիրառության բնագավառը՝ ելնելով հիմնական հատկություններից, տեխնիկաշահագործական պահանջներից,</p> <p>5) ճիշտ է բացատրում խեցեգործական նյութերի, շինվածքների տեղափոխման պահպանման կանոնները:</p>
Գնահատման միջոց	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական արդյունքի միջոցով: Սովորողին կտրվի կոնկրետ գործնական առաջադրանք, ըստ որի նա պետք է տարբերի խեցեգործական նյութերն ըստ արտաքին տեսքի և բնութագրի դրանք, լաբորատոր փորձարկման միջոցով որոշի խեցեգործական շինվածքի ֆիզիկամեխանիկական հատկությունները:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, եթե գործնական առաջադրանքը կատարվել է ճիշտ, կամ թույլատրելի շեղումներով: Հարց ու պատասխանի ժամանակ՝ թույլատրելի են ոչ էական բացթողումներ և անճշտություններ:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Տեսական ուսուցում և լաբորատոր պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտացված լաբորատորիա՝ անհրաժեշտ սարքավորումներով և նյութերով, խեցեգործական շինվածքների նմուշների հավաքածու: Տեսական ուսուցման համար անհրաժեշտ է ուսումնական և մեթոդական գրականություն, առաջարկելի է տեսաֆիլմերի, ցուցապաստառների ցուցադրումը համակարգչով կամ թվային պրոյեկտորով: Անհրաժեշտ է պահպանել անվտանգության տեխնիկայի և սանիտարիայի կանոնները:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>Տեսական ուսուցում՝ 2 ժամ</p> <p>Լաբորատոր պարապմունք՝ 6 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 3	<p>Ներկայացնել մետաղների և մետաղական իրերի ընդհանուր բնութագիրը, դասակարգումը, տարատեսակները, հատկությունները, կոռոզիան և պաշտպանումը նրանից, տեղափոխման ու պահպանման կանոնները, կիրառության բնագավառը</p>

<p>Կատարման չափանիշները</p>	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում մետաղների ընդհանուր բնութագիրը և բացատրում մետաղների դասակարգումը, 2) ճիշտ է ներկայացնում պողպատը որպես երկաթածխածնային հիմնական միացություն, կառուցվածքային էությունը, հատկությունները և մակնիշավորման սկզբունքները, 3) կարողանում է մետաղների նմուշների կտրվածքով տարբերել և ճանաչել պողպատները, 4) ճիշտ է ներկայացնում շինարարությունում կիրառվող գունավոր մետաղների տեսակները, 5) ճիշտ է մեկնաբանում մետաղների կոռոզիան և պաշտպանումը նրանից, 6) ճիշտ է բացատրում մետաղական շինվածքների տեղափոխման , պահպանման կանոնները և նկարագրում նրանց կիրառության բնագավառը:
<p>Գնահատման միջոց</p>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական արդյունքի միջոցով: Սովորողին կտրվի կոնկրետ գործնական առաջադրանք, ըստ որի նա պետք է տարբերակի պողպատը , թուջը, այլումինն ըստ հանձնարարված մետաղների կտրվածքների, ըստ արտաքին տեսքի տարբերակի հանձնարարված ամրանային նմուշների տեսակները և դասը:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, եթե գործնական առաջադրանքը կատարվել է ճիշտ, կամ թույլատրելի շեղումներով: Հարց ու պատասխանի դեպքում՝ թույլատրելի են ոչ էական բացթողումներ և անճշտություններ:</p>
<p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p>	<p>Տեսական ուսուցում և լաբորատոր պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտացված լաբորատորիա՝ անհրաժեշտ սարքավորումներով և նյութերով, մետաղների և ամրանների նմուշներով: Տեսական ուսուցման համար անհրաժեշտ է ուսումնական և մեթոդական գրականություն, ցանկալի է տեսաֆիլմերի, ցուցապաստառների ցուցադրումը համակարգչով կամ թվային պրոյեկտորով: Անհրաժեշտ է պահպանել անվտանգության տեխնիկայի և սանիտարիայի կանոնները:</p>
<p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</p>	<p>Տեսական ուսուցում՝ 4 ժամ Լաբորատոր պարապմունք՝ 6 ժամ</p>

<p>Ուսումնառության արդյունք 4</p>	<p>Ներկայացնել կապակցանյութերի ընդհանուր բնութագիրը, տեսակները, նրանց դասակարգումը, տարատեսակները, կազմությունը, որակի նկատմամբ տեխնիկական պահանջները, հատկությունները, պնդացումը, տեղափոխման, պահպանման կանոնները, կիրառելիության պահանջները:</p>
<p>Կատարման չափանիշները</p>	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է նկարագրում կապակցանյութերի նշանակությունը շինարարությունում, 2) ճիշտ է բնութագրում հիդրավլիկ կապակցանյութերը, մեկնաբանում դրանց հիմնական հատկությունները, պնդացումը, որակի նկատմամբ տեխնիկական պահանջները, 3) ճիշտ է ներկայացնում բիտումային կապակցանյութերը, տեսակները, հիմնական հատկանիշները, ֆիզիկամեխանիկական հատկությունները, 4) ճիշտ է հրահանգավորում կապակցանյութերի փոխադրման և պահպանման կանոնները:
<p>Գնահատման միջոց</p>	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական արդյունքի միջոցով: Սովորողին կտրվի կոնկրետ գործնական առաջադրանք, ըստ որի նա պետք է կատարի հետևյալ հանձնարարություններից մեկը կամ մի քանիսը՝</p> <ol style="list-style-type: none"> 1) որոշի կրի տեսակը և մարման արագությունը, 2) գիպսախմորի կամ ցեմենտախմորի թանձրությունը, 3) ցեմենտախմորից պատրաստի փորձարկման նմուշ, 4) նախօրոք պատրաստված ցեմենտախմորից նմուշը ենթարկի փորձարկումների ըստ սեղմման և ծռման, որոշի ցեմենտի մակնիշը: <p>Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, եթե գործնական առաջադրանքը կատարվել է ճիշտ, կամ թույլատրելի շեղումներով: Հարց ու պատասխանի դեպքում՝ թույլատրելի են ոչ էական բացթողումներ և անճշտություններ:</p>
<p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p>	<p>Տեսական ուսուցում և լաբորատոր պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտացված լաբորատորիա՝ անհրաժեշտ սարքավորումներով և նյութերով, այդ թվում տարատեսակ կապակցանյութերով: Տեսական ուսուցման համար անհրաժեշտ է ուսումնական և մեթոդական գրականություն, ցանկալի է տեսաֆիլմերի,</p>

	ցուցապաստառների ցուցադրումը համակարգչով կամ թվային պրոյեկտորով: Անհրաժեշտ է պահպանել անվտանգության տեխնիկայի և սանիտարիայի կանոնները:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 2 ժամ Լաբորատոր պարապմունք՝ 6 ժամ
Ուսումնառության արդյունք 5	Ներկայացնել շինարարությունում կիրառվող բետոնների և շաղախների տեսակները և հատկությունները, տիրապետել ցեմենտային շաղախ և բետոն պատրաստելու հմտություններին:
Կատարման չափանիշները	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում բետոնների և շինարարական շաղախների հատկությունները (խտություն, ծավալային զանգված, ցրտադիմացկունություն, ամրություն, ջրաթափանցելիություն և այլն), 2) կարողանում է ճիշտ ընտրել բետոնային և շաղախային խառնուրդների կազմը բացարձակ ծավալների մեթոդով և որոշել խառնուրդների շարժունակությունը, 3) ճիշտ է ներկայացնում բետոնների և շաղախների բաղադրիչներին ներկայացվող պահանջները, 4) պատրաստում է շաղախային խառնուրդ ըստ տրված բաղադրամասերի, 5) պատրաստում է բետոնային խառնուրդ ըստ տրված բաղադրամասերի:
Գնահատման միջոց	<p>Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական արդյունքի միջոցով: Սովորողին կտրվի կոնկրետ գործնական առաջադրանք, ըստ որի նա պետք է կատարի հետևյալ հանձնարարություններից մեկը կամ մի քանիսը՝</p> <ol style="list-style-type: none"> 1) պատրաստի առաջադրված կազմի շաղախային խառնուրդ և որոշի նրա շարժունակությունը, 2) պատրաստի առաջադրված կազմի բետոնային խառնուրդ և որոշի նրա շարժունակությունը, 3) լաբորատոր փորձարկումների միջոցով որոշի բետոնի հանձնարարված լցանյութերի որակի գնահատում, 4) կատարի հանձնարարված դասի ծանր բետոնի կազմի հաշվարկ: <p>Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, եթե գործնական առաջադրանքը կատարվել է ճիշտ, կամ թույլատրելի շեղումներով: Հարց ու պատասխանի դեպքում՝ թույլատրելի են ոչ էական բացթողումներ և</p>

	անճշտություններ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Տեսական ուսուցում և լաբորատոր պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտացված լաբորատորիա՝ անհրաժեշտ սարքավորումներով և նյութերով, այդ թվում տարատեսակ կապակցանյութերով, լցանյութերով: Տեսական ուսուցման համար անհրաժեշտ է ուսումնական և մեթոդական գրականություն, առաջարկելի է տեսաֆիլմերի, ցուցապաստառների ցուցադրումը համակարգչով կամ թվային պրոյեկտորով: Անհրաժեշտ է պահպանել անվտանգության տեխնիկայի և սանիտարիայի կանոնները:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 4 ժամ Լաբորատոր պարապմունք՝ 8 ժամ
Ուսումնառության արդյունք 6	Ներկայացնել մեկուսիչ նյութերի բնութագրերը, տեսակները, հատկությունները, գործածության ժամանակ նրանց նկատմամբ ներկայացվող պահանջները, կիրառության բնագավառը:
Կատարման չափանիշները	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում ջրամեկուսիչ, ջերմամեկուսիչ, ձայնամեկուսիչ և հերմետիկացնող նյութերի բնութագիրը, դասակարգումը, 2) ճիշտ է ներկայացնում պոլիմերների հիման վրա պատրաստված շինարարական նյութերի և շինվածքների նշանակությունը, բաղադրիչները, տեսակները, հիմնական հատկությունները, ներկայացվող պահանջները, 3) ճիշտ է ներկայացնում լաքաներկային նյութերի նշանակությունը, տեսակները, բաղադրանյութերը, հիմնական հատկությունները, ներկայացվող պահանջները, 4) ճիշտ է նկարագրում մեկուսիչ նյութերի տեղափոխման պահպանման գործընթացը:
Գնահատման միջոց	Արդյունքի յուրացումը գնահատվելու է թեսթային առաջադրանքի միջոցով (առնվազն 20 հարց՝յուրաքանչյուրին կցված 3 պատասխաններով, որոնցից միայն մեկն է ճիշտ): Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, եթե թեսթային առաջադրանքը կատարված է 80 տոկոսի ճշտությամբ:
Մեթոդաբանությունը և	Տեսական ուսուցում: Անհրաժեշտ է ունենալ ջրամեկուսիչ, ջերմամեկուսիչ, ձայնամեկուսիչ, լաքաներկային և

ռեսուրսները	հերմետիկացնող նյութերի նմուշներ, ուսումնական գրականություն, ցանկալի է տեսաֆիլմերի, ցուցապաստառների ցուցադրումը համակարգչով կամ թվային պրոյեկտորով: Անհրաժեշտ է պահպանել անվտանգության տեխնիկայի և սանիտարիայի կանոնները:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 4 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ՏԲԳ 3-12-003
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել գիտելիքներ աշխատանքի պաշտպանությունը կարգավորող նորմատիվ ակտերի, շինարարական արտադրական միջավայրում հնարավոր վնասվածքների տեսակների և դրանց կանխարգելման եղանակների մասին և դրանք կիրառելու գործնական կարողություններ:
Մոդուլի տևողությունը	36 ժամ Տեսական ուսուցում՝ 24 ժամ Գործնական պարապմունք՝ 12 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է կարողանա՝ 1) ներկայացնել աշխատանքի պաշտպանության իրավական և կազմակերպչական դրույթները, 2) ներկայացնել շինարարությունում արտադրության սանիտարիան և աշխատանքի հիգիենան, 3) ներկայացնել աշխատանքի պաշտպանության նորմերը և կանոնները, ներկայացնել մասնագիտական բնագավառում անվտանգության տեխնիկայի, հակահրդեհային պաշտպանության և էկոլոգիական անվտանգության ընդհանուր պահանջները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների

	բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել աշխատանքի պաշտպանության իրավական և կազմակերպչական դրույթները:
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում շինարարական կազմակերպությունում աշխատանքի պաշտպանության վերաբերյալ իրավական ակտերը և օրենքները, 2) հստակ է թվարկում շինարարական կազմակերպությունում աշխատանքի պաշտպանության կազմակերպման ներքին նորմատիվային փաստաթղթերը 3) հստակ է պատկերացնում աշխատանքի պաշտպանության նորմերի և կանոնների խախտման հետ կապված պատասխանատվությունը 4) հստակ բացատրում է արտադրությունում դժբախտ դեպքերի և պատահարների հետաքննության փաստաթղթավարման և հաշվառման կարգը:
Գնահատման միջոց	Արդյունքի յուրացումը գնահատվում է թեսթային առաջադրանքի միջոցով: Թեսթի յուրաքանչյուր հարցին հետևում է 3 պատասխան, որոնցից միայն մեկն է ճիշտ: Ուսանողը պետք է ընտրի ճիշտ պատասխանը: Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, եթե ուսանողը թեսթային առաջադրանքը կատարել է 80 տոկոսի ճշտությամբ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Տեսական ուսուցում: Ուսուցումը նպատակահարմար է իրականացնել համատեղված կաբինետում՝ աշխատանքային անվտանգության և առաջին օգնության: Անհրաժեշտ է ունենալ աշխատանքի պաշտպանության վերաբերյալ օրենսդրական, իրավական, նորմատիվային ակտերի ժողովածուներ, տեղեկատվական գրականություն, առաջարկելի է ցուցապաստառների ցուցադրումը համակարգչով կամ թվային պրոյեկտորով:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 6 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել շինարարությունում արտադրության սանիտարիան և աշխատանքի հիգիենան:
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում շինարարի աշխատանքի և շինարարական արտադրության սանիտարիայի և

	<p>հիգիենայի առանձնահատկությունները,</p> <p>2) ճիշտ է սահմանում տանիքագործական վնասակարար նյութերի սահմանային թույլատրելի կոնցենտրացիան</p> <p>3) ճիշտ է հիմնավորում շինհրապարակի սանիտարակենցաղային պայմանների կազմակերպման անհրաժեշտությունը:</p>
Գնահատման միջոց	<p>Արդյունքի յուրացումը գնահատվում է թեսթային առաջադրանքի միջոցով: Թեսթի յուրաքանչյուր հարցին հետևում է 3 պատասխան, որոնցից միայն մեկն է ճիշտ: Ուսանողը պետք է ընտրի ճիշտ պատասխանը:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, եթե ուսանողը թեսթային առաջադրանքը կատարել է 80 տոկոսի ճշտությամբ:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Տեսական ուսուցում: Ուսուցումը նպատակահարմար է իրականացնել համատեղված կաբինետում՝ աշխատանքային անվտանգության և առաջին օգնության: Անհրաժեշտ է ունենալ արտադրության սանիտարիայի և աշխատանքի հիգիենայի վերաբերյալ նորմատիվային գրականություն, առաջարկելի է ցուցապաստառների ցուցադրումը համակարգչով կամ թվային պրոյեկտորով:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>Տեսական ուսուցում՝ 6 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 3	<p>Ներկայացնել աշխատանքի պաշտպանության նորմերը և կանոնները:</p>
Կատարման չափանիշները	<p>1) ճիշտ է սահմանում և կիրառում օդերևույթաբանական պայմանները ապահովող բնորոշ պարամետրերի նորմերը,</p> <p>2) ճիշտ է բացատրում աղմուկի և վիբրացիայի առաջացման պատճառները, թույլատրելի սահմանը, հետևանքները և կիրառում աղմուկի և վիբրացիայի վնասակարար գործունեությունից պաշտպանվելու մեթոդները,</p> <p>3) ճիշտ է սահմանում և կիրառում արհեստական լուսավորության նորմերը,</p>

	<p>4) ճիշտ է սահմանում և պահպանում էլեկտրաանվտանգության կանոնները,</p> <p>5) ճիշտ է սահմանում և պահպանում հրդեհաանվտանգության կանոնները:</p>
Գնահատման միջոց	<p>Արդյունքի յուրացումը գնահատվում է թեսթային և գործնական առաջադրանքի միջոցով: Թեսթի յուրաքանչյուր հարցին հետևում է 3 պատասխան, որոնցից միայն մեկն է ճիշտ: Սովորողը պետք է ընտրի ճիշտ պատասխանը: Գործնական առաջադրանքն իրենից ներկայացնում է խնդիրների համալիր, որոնց լուծման համար ուսանողը պետք է կիրառի աշխատանքի պաշտպանության հետ կապված որոշակի նորմատիվային պարամետրեր:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, եթե սովորողը թեսթային առաջադրանքը կատարել է 80 տոկոսի ճշտությամբ, իսկ գործնական առաջադրանքը՝ անսխալ:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Տեսական ուսուցում և գործնական աշխատանք: Ուսուցումը նպատակահարմար է իրականացնել համատեղված կաբինետում՝ աշխատանքային անվտանգության և առաջին օգնության: Անհրաժեշտ է ուսումնական և նորմատիվային գրականություն, առաջարկելի է ցուցապաստառների ցուցադրումը համակարգչով կամ թվային պրոյեկտորով:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>Տեսական ուսուցում՝ 6 ժամ</p> <p>Գործնական պարապմունք՝ 12 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 4	<p>Ներկայացնել մասնագիտական բնագավառում անվտանգության տեխնիկայի, հակահրդեհային պաշտպանության և էկոլոգիական անվտանգության ընդհանուր պահանջները:</p>
Կատարման չափանիշները	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում տանիքագործական աշխատանքների ժամանակ վերին և ստորին վտանգավոր գոտիների որոշման և սահմանափակման կարգը, 2) բնորոշում է ռիսկի գործոնները՝ բարձրության վրա աշխատելիս, 3) ճիշտ է ներկայացնում բարձրության վրա աշխատելու թույլտվություն ստացման կարգը, 4) կարող է կիրառել անհատական պաշտպանության միջոցները, 5) ճիշտ է ներկայացնում անհատական պաշտպանական միջոցներին և արտահագուստին ներկայացվող

	<p>պահանջները, դրանց պահպանման և շահագործման կազմ,</p> <p>6) կարող է իրականացնել նախաբժշկական օգնություն,</p> <p>7) ճիշտ է ներկայացնում մասնագիտական բնագավառում աշխատանքի անվտանգության ապահովման առանձնահատկությունները,</p> <p>8) ճիշտ է ներկայացնում մասնագիտական բնագավառում էլեկտրաանվտանգության պահանջները,</p> <p>9) ճիշտ է ներկայացնում մասնագիտական բնագավառում հակահրդեհային պաշտպանության պահանջները,</p> <p>10) կարող է կիրառել կրակմարիչը,</p> <p>11) կարող է կիրառել հակահրդեհային հիդրանտը,</p> <p>12) ճիշտ է ներկայացնում մասնագիտական բնագավառում էկոլոգիական անվտանգության պահանջները:</p>
Գնահատման միջոց	<p>Արդյունքի յուրացումը գնահատվում է թեսթային առաջադրանքի միջոցով: Թեսթի յուրաքանչյուր հարցին հետևում է 3 պատասխան, որոնցից միայն մեկն է ճիշտ: Ուսանողը պետք է ընտրի ճիշտ պատասխանը:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, եթե ուսանողը թեսթային առաջադրանքը կատարել է 80 տոկոսի ճշտությամբ:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Տեսական ուսուցում: Ուսուցումը նպատակահարմար է իրականացնել համատեղված կաբինետում՝ աշխատանքային անվտանգության և առաջին օգնության: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական և նորմատիվային գրականություն, առաջարկելի է ցուցապաստառների ցուցադրումը համակարգչով կամ թվային պրոյեկտորով:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 6 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾ»	
Մոդուլի դասիչը	ՏՔԳ 3-12-004
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողին տալ ընդհանուր գիտելիքներ շենքերի կառուցման տեխնոլոգիաների և

	կազմակերպման, ինչպես նաև առանձին շինարարական գործընթացների իրականացման տեխնոլոգիական և կազմակերպչական հմտությունների վերաբերյալ:
Մոդուլի տևողությունը	54 ժամ Տեսական ուսուցում` 18 ժամ Գործնական պարապմունք` 36 ժամ այդ թվում կուրսային աշխատանք` 24 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլը յուրացնելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է կարողանա` 1) ներկայացնել շինարարական գործընթացների նախագծման փաստաթղթերը, 2) ներկայացնել շենքերի հիմնական կառուցվածքային սխեմաները և տարրերը, 3) ներկայացնել շինարարամոնտաժային գործընթացների իրականացման տեխնոլոգիան:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել շինարարական գործընթացների նախագծման փաստաթղթերը:
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում տեխնոլոգիական քարտերը և սխեմաները, 2) ճիշտ է ներկայացնում տեխնոլոգիական քարտի կազմը, 3) կարող է ներկայացնել տեխնոլոգիական քարտի առանձին բաժինների հակիրճ նկարագիրը:
Գնահատման միջոց	Արդյունքի յուրացումը գնահատվում է թեսթային առաջադրանքի միջոցով: Թեսթի յուրաքանչյուր հարցին հետևում է 3 պատասխան, որոնցից միայն մեկն է ճիշտ: Ուսանողը պետք է ընտրի ճիշտ պատասխանը: Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, եթե ուսանողը թեսթային առաջադրանքը կատարել է 80 տոկոսի ճշտությամբ:
Մեթոդաբանությունը և	Տեսական ուսուցում: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական գրականություն, տիպարային տեխնոլոգիական

ռեսուրսները	քարտեր: Ցանկալի է տեխնոլոգիական գործընթացների իրականացման վերաբերյալ տեսաֆիլմերի ցուցադրումը:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 6 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել շենքերի հիմնական կառուցվածքային սխեմաները և տարրերը
Կատարման չափանիշներ	<p>տարբերում է շենքերի պատային, կմախքային, ծավալաբլոկային կառուցվածքային համակարգերը,</p> <ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում հիմքերի նշանակությունը և դրանց տեսակները, 2) ճիշտ է ներկայացնում պատերի նշանակությունը և դրանց տեսակները, 3) ճիշտ է ներկայացնում միջնորմերի նշանակությունը և դրանց տեսակները, 4) ճիշտ է ներկայացնում սյուների նշանակությունը և դրանց տեսակները, 5) ճիշտ է ներկայացնում հեծանների նշանակությունը և դրանց տեսակները, 6) ճիշտ է ներկայացնում ծածկերի նշանակությունը և դրանց տեսակները, 7) ճիշտ է ներկայավնում տանիքների նշանակությունը և դրանց տեսակները, 8) տարբերում է լանջավոր տանիքների կառուցվածքային տարրերը՝ կանգնակը, ծպեղնատուքը, հենագերանը, որմնափայտը, թեքանը, կավարամածը, լանջը, կողերը, ցվիքը, պիպը, հոսանոցը, ջրորդանը, ջրահեռացման ձագարը, ջրահեռացման խողովակները, 9) ճիշտ է ներկայացնում ,տանիքային ծածկույթե և ,տանիքե հասկացությունների տարբերությունը, 10) ճիշտ է ներկայացնում տանիքային ծածկույթների դասակարգումը:
Գնահատման միջոց	Արդյունքի յուրացումը գնահատվում է թեսթային և գործնական առաջադրանքների միջոցով: Թեսթի յուրաքանչյուր հարցին հետևում է 3 պատասխան, որոնցից միայն մեկն է ճիշտ: Ուսանողը պետք է ընտրի ճիշտ պատասխանը: Գործնական առաջադրանքը կտրվի հատակագծերի, կտրվածքների, ճակատների, տանիքի հատակագծերի և կտրվածքների գծագրերի հավաքածուից երկուսի տրամադրմամբ: Դրանց վրա ուսանողը պետք է նշի առանձին կառուցվածքային տարրերի անվանումները:

	Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, եթե ուսանողը թեսթային և գործնական առաջադրանքները կատարել է 80 տոկոսի ճշտությամբ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Տեսական ուսուցում և գործնական աշխատանք: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական գրականություն, նախագծերի կատալոգներ: Ուսուցումը նպատակահարմար է իրականացնել տանիքային ծածկույթների տեխնոլոգիայի կաբինետում:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 6 ժամ Գործնական պարապմունք՝ 6 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել շինարարամոնտաժային գործընթացների իրականացման տեխնոլոգիան:
Կատարման չափանիշները	<ol style="list-style-type: none"> 1) ընդհանուր պատկերացում ունի հողի մշակման, որմնային, կաղապարամածային, ամրանային, բացվածքների լրացման, հարդարման, հատակային գործընթացների տեխնոլոգիաների վերաբերյալ, 2) ճիշտ է ներկայացնում բետոնախառնուրդների պատրաստման եղանակները բնականոն և ծայրահեղ կլիմայական պայմաններում, հավելումների նշանակությունը, 3) ճիշտ է ներկայացնում շինարարական կոնստրուկցիաների մոնտաժման տեխնոլոգիաները, մոնտաժման տեխնիկական միջոցները, մոնտաժային միացումների, կցվանքների իրականացման տեխնոլոգիական հմտությունները, ծայրահեղ կլիմայական պայմաններում մոնտաժային աշխատանքների իրականացման առանձնահատկությունները, 4) ճիշտ է ներկայացնում փայտե և պլաստմասե կոնստրուկցիաների պատրաստման և մոնտաժման եղանակները, 5) ճիշտ է ներկայացնում պաշտպանիչ ծածկույթների իրականացման ավանդական և նորագույն, տեխնոլոգիաները, ձմեռային պայմաններում դրանց իրականացման տեխնոլոգիական առանձնահատկությունները, 6) ճիշտ է ներկայացնում տանիքային աշխատանքների իրականացման ավանդական և նորագույն

	<p>տեխնոլոգիաները, ծայրահեղ կլիմայական պայմաններում դրանց իրականացման առանձնահատկությունները, տանիքային աշխատանքների կազմակերպման հիմունքները,</p> <p>7) ճիշտ է ներկայացնում տանիքագործական աշխատանքներում կիրառվող մեխանիզմները, սարքավորումները, գործիքները, դրանց կառուցվածքը, աշխատանքի սկզբունքը, շահագործման կարգը:</p>
Գնահատման միջոց	<p>Արդյունքի յուրացումը գնահատվում է թեսթային առաջադրանքի և կուրսային աշխատանքի միջոցով: Թեսթի յուրաքանչյուր հարցին հետևում է 3 պատասխան, որոնցից միայն մեկն է ճիշտ: Ուսանողը պետք է ընտրի ճիշտ պատասխանը: Կուրսային աշխատանքում կատարվում է տանիքային որևէ ծածկույթի իրականացման աշխատանքների ծավալների հաշվարկ, անհրաժեշտ մեքենաների, մեխանիզմների, սարքավորումների, գործիքների, հարմարանքների, հանդերձանքի ընտրություն, պահանջվող հիմնական նյութերի և կոնստրուկցիաների պահանջարկի որոշում, պարզագույն ժամանակացույցի մշակում: Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, եթե ուսանողը թեսթային առաջադրանքը կատարել է 80 տոկոսի ճշտությամբ, իսկ կուրսային աշխատանքը կատարել է առանց էական անճշտությունների:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Տեսական ուսուցում և կուրսային աշխատանք: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական և նորմատիվային գրականություն, նախագծերի կատալոգներ: Առաջարկելի է տեսաֆիլմերի, նախագծերի ցուցադրումը համակարգչով կամ թվային պրոյեկտորով: Կուրսային աշխատանքը նպատակահարմար է կատարել գծագրության և տանիքային ծածկույթների տեխնոլոգիայի կաբինետներում:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>Տեսական ուսուցում՝ 6 ժամ</p> <p>Գործնական պարապմունք՝ 24 ժամ</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԳԼԱՆԱՓԱԹԵԹԱՎՈՐ ԵՎ ՄԱԾԻԿԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻՑ ՏԱՆԻՔԱՅԻՆ ԾԱԾԿՈՒՅԹՆԵՐԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ»	
Մոդուլի դասիչը	ՏՔԳ 3-12-005
Մոդուլի նպատակը	<p>Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել տեսական գիտելիքներ և գործնական կարողություններ գլանափաթեթավոր և մածիկային նյութերից տանիքային ծածկույթների պատրաստման վերաբերյալ:</p>

Մոդուլի տևողությունը	54 ժամ Տեսական ուսուցում` 6 ժամ Գործնական պարապմունք` 48 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՏԲԳ 03-012-003: «Աշխատանքի պաշտպանություն», ՏԲԳ 03-012-004 «Շինարարական գործ» մոդուլները:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է կարողանա՝ 1) ներկայացնել տանիքային հիմնաշերտի նախապատրաստման գործնական կարողություններ, 2) ներկայացնել մեկուսիչ շերտերի պատրաստման գործնական կարողություններ, 3) ներկայացնել հարթեցնող շերտերի պատրաստման գործնական կարողություններ, 4) ներկայացնել տանիքային գորգի պատրաստման եղանակների գործնական կարողություններ, 5) ներկայացնել գլանափաթեթավոր և մածիկային ծածկույթներով տանիքներում կիրառվող նյութերի տեսականին, 6) ներկայացնել աշխատատեղի կազմակերպման և անվտանգության տեխնիկայի կանոնները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել տանիքային հիմնաշերտի նախապատրաստման գործնական կարողություններ
Կատարման չափանիշներ	1) մաքրում, չորացնում, մածկում է բետոնե հիմնաշերտի մակերևույթը, 2) ստուգում է հիմնաշերտի հարթությունը և նախագծային թեքությունները , 3) պատրաստում է փայտե հենաշերտ, 4) մշակում է փայտե հենաշերտը պաշտպանիչ լուծույթներով և կազմերով:
Գնահատման միջոց	Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական պարապմունքի ընթացքում կատարած աշխատանքի հիման վրա:

	<p>Գործնական իրավիճակում արդյունքի յուրացումը կգնհատվի դրական, եթե՝</p> <p>սովորողն ըստ իրեն տրված առաջադրանքի կարող է նախապատրաստել աշխատանքային մակերևույթը բետոնե հիմնաշերտ իրականացնելու համար, կարող է ստուգել հիմնաշերտի հարթությունը և նախագծային թեքությունները,</p> <p>սովորողն ըստ իրեն տրված առաջադրանքի կատարում է փայտե հենաշերտի պատրաստում և կարող է մշակել այն պաշտպանիչ նյութերով,</p> <p>բոլոր աշխատանքները կատարված են համապատասխան գործող նորմերի և ստանդարտների՝ պահպանելով աշխատանքի անվտանգության, հրդեհաանվտանգության և բնապահպանական կանոնները:</p>
<p>Մեթոդաբանությունը եվ ռեսուրսները</p>	<p>Գործնական ուսուցում տանիքագործական արհեստանոցում և հենակետային շինարարական օբյեկտներում: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական և նորմատիվային գրականություն, աշխատանքներ իրականացնելու համար ցեմենտի, ավազի, խճի , սղոցված փայտանյութի, մեխերի , ամրակների և պաշտպանիչ կազմերի որոշակի պաշար, ինչպես նաև անհրաժեշտ գործիքներ, գույք, արտահագուստ, պաշտպանիչ միջոցներ:</p>
<p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</p>	<p>Գործնական ուսուցում՝ 8 ժամ</p>
<p>Ուսումնառության արդյունք 2</p>	<p>Ներկայացնել մեկուսիչ շերտերի պատրաստման գործնական կարողություններ</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<ol style="list-style-type: none"> 1) տեղադրում է գոլորշամեկուսիչ շերտ մածիկային և գլանափաթեթավոր նյութերից, 2) տեղադրում է ջերմամեկուսիչ շերտ սորուն նյութերից, 3) տեղադրում է ջերմամեկուսիչ շերտ սալային նյութերից, 4) տեղադրում է ջերմամեկուսիչ շերտ թեթև բետոններից:
<p>Գնահատման միջոց</p>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական պարապմունքի ընթացքում կատարած աշխատանքի հիման վրա:</p>

	<p>Գործնական իրավիճակում արդյունքի յուրացումը կգնհատվի դրական, եթե՝</p> <p>սովորողն ըստ իրեն տրված առաջադրանքի կարող է իրականացնել տանիքի գոլորշամեկուսացում մածիկային և գլանափաթեթավոր նյութերով՝ինչպես տաք, այնպես էլ սառը եղանակներով,</p> <p>կարող է իրականացնել տանիքի ջերմամեկուսացում սորուն և սալային նյութերով, ստուգել սորուն շերտի անհրաժեշտ հաստությունը,</p> <p>կարող է պատրաստել թեթև բետոնի որոշակի քանակ և տեղադրել այն որպես ջերմամեկուսիչ շերտ անհրաժեշտ հաստությամբ,</p> <p>բոլոր աշխատանքները կատարված են համապատասխան գործող նորմերի և ստանդարտների՝ պահպանելով աշխատանքի անվտանգության, հրդեհաանվտանգության և բնապահպանական կանոնները:</p>
<p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p>	<p>Գործնական ուսուցում տանիքագործական արհեստանոցում և հենակետային շինարարական օբյեկտներում:</p> <p>Անհրաժեշտ է ունենալ ուսումնական և նորմատիվային գրականություն, աշխատանքներ իրականացնելու համար ցեմենտի, ավազի, խճի, խարամի, հանքածյուրի, բիտումային մածիկի, լուծիչների, գլանափաթեթավոր, սալային ջերմամեկուսիչ նյութերի որոշակի պաշար, ինչպես նաև անհրաժեշտ գործիքներ, սարքավորումներ, գույք, արտահագուստ, պաշտպանիչ միջոցներ:</p>
<p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</p>	<p>Գործնական պարապմունք՝ 8 ժամ</p>
<p>Ուսումնառության արդյունք 3</p>	<p>Ներկայացնել հարթեցնող շերտերի պատրաստման գործնական կարողություններ</p>
<p>Կատարման չափանիշները</p>	<ol style="list-style-type: none"> 1) պատրաստվում է պահանջվող կազմի ցեմենտավազային շաղախ, 2) տեղադրում է հարթեցնող շերտը նախագծային հաստությամբ, 3) իրականացնում է առանձին տարրերի տեղադրում (խարսխային հեղույսներ, հականեխիչ լուծույթով պատված փայտե ձողեր, ջրահեռացման ձագարներ, դեֆորմացիոն-նստվածքային կարաններ և այլն),

	<p>4) իրականացնում է հարթեցնող շերտի խնամք,</p> <p>5) ստուգում է հարթեցնող շերտի որակը պարզ եղանակներով:</p>
Գնահատման միջոց	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական պարապմունքի ընթացքում կատարած աշխատանքի հիման վրա:</p> <p>Գործնական իրավիճակում արդյունքի յուրացումը կգնահատվի դրական, եթե՝</p> <p>սովորողն ըստ իրեն տրված առաջադրանքի կարող է պատրաստել պահաջվող կազմի ցեմենտավազային շաղախ և տեղադրել այն որպես տանիքի հարթեցնող շերտ անհրաժեշտ հաստությամբ՝ իրականացնելով դեֆորմացիոն-նստվածքային կարաններ և տեղադրելով առանձին նախազծային տարրեր,</p> <p>կարող է իրականացնել հարթեցնող շերտի խնամք / ջրում / և որակի ստուգում պարզ եղանակներով, բոլոր աշխատանքները կատարված են համապատասխան գործող նորմերի և ստանդարտների՝ պահպանելով աշխատանքի անվտանգության, և բնապահպանական կանոնները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Գործնական ուսուցում տանիքագործական արհեստանոցում և հենակետային շինարարական օբյեկտներում:</p> <p>Անհրաժեշտ է ունենալ ուսումնական և նորմատիվային գրականություն, աշխատանքներ իրականացնելու համար ցեմենտի, ավազի որոշակի պաշար, ինչպես նաև անհրաժեշտ գործիքներ, գույք, արտահագուստ, պաշտպանիչ միջոցներ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Գործնական պարապմունք՝ 12 ժամ
Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել տանիքային գորգի պատրաստման եղանակների գործնական կարողություններ
Կատարման չափանիշները	<ol style="list-style-type: none"> 1) փակցնում է գորգի գլանափաթեթավոր նյութերը ձեռքով և սարքավորումների, հարմարանքների կիրառմամբ, 2) գորգով պատում է տանիքի առանձին տարրերը՝ ցվիքը, քիվը, ֆրոնտոնը, պիպը, հոսանոցը և այլն, 3) իրականացնում է պատերի, դեֆորմացիոն կարանների և այլ տարրերի հետ գորգի հպման հանգույցները,

	<p>4) իրականացնում է մածիկային ծածկույթի ամրանային շերտը,</p> <p>5) իրականացնում է հիմնական շերտեր սառը մածիկներից,</p> <p>6) իրականացնում է հիմնական շերտեր տաք մածիկներից,</p> <p>7) իրականացնում է գորգի պաշտպանիչ շերտը,</p> <p>8) վերահսկում է գորգի պատրաստման որակը, կարող է հայտնաբերել և վերացնել արատները:</p>
<p>Գնահատման միջոց</p>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական պարապմունքի ընթացքում կատարած աշխատանքի հիման վրա:</p> <p>Գործնական իրավիճակում արդյունքի յուրացումը կգնահատվի դրական, եթե՝</p> <p>սովորողն ըստ իրեն տրված առաջադրանքի կարող է տանիքի հենաշերտի վրա փակցնել գլանափաթեթավոր նյութեր տաք և սառը եղանակներով՝ ձեռքով և սարքավորումների կիրառմամբ, իրականացնել կցվանքների, տանիքի առանձին տարրերի պատում գլանափաթեթավոր նյութերով, կարող է իրականացնել մածիկային ծածկույթներ տաք և սառը եղանակներով, տեղադրել մածիկային ծածկույթների ամրանը,</p> <p>բոլոր աշխատանքները կատարված են համապատասխան գործող նորմերի և ստանդարտների՝ պահպանելով աշխատանքի անվտանգության, հրդեհաանվտանգության և բնապահպանական կանոնները:</p>
<p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p>	<p>Գործնական ուսուցում տանիքագործական արհեստանոցում և հենակետային շինարարական օբյեկտներում:</p> <p>Անհրաժեշտ է ունենալ ուսումնական և նորմատիվային գրականություն, աշխատանքներ իրականացնելու համար գլանափաթեթավոր նյութերի, հանքաձյութի, բիտումային մածիկի որոշակի պաշար, ինչպես նաև անհրաժեշտ գործիքներ, սարքավորումներ, գույք, արտահագուստ, պաշտպանիչ միջոցներ:</p>
<p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</p>	<p>Գործնական պարապմունք՝ 12 ժամ</p>
<p>Ուսումնառության արդյունք 5</p>	<p>Ներկայացնել գլանափաթեթավոր և մածիկային ծածկույթներով տանիքներում կիրառվող նյութերի տեսականին</p>

Կատարման չափանիշները	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում կիրառվող փայտանյութերի տեսակները և դրանց տեխնոլոգիական հատկությունները, 2) ճիշտ է ներկայացնում մեկուսիչ, գլանափաթեթավոր, մածիկային նյութերի տեսականին տեղական շուկայում, ինչպես նաև դրանց տեխնիկական հատկությունները, կիրառման ոլորտը, տեղադրման եղանակները, 3) ճիշտ է ներկայացնում կիրառվող մոնտաժային տարրերը:
Գնահատման միջոց	<p>Արդյունքի յուրացումը գնահատվում է թեսթային և գործնական առաջադրանքի միջոցով: Թեսթի յուրաքանչյուր հարցին հետևում է 3 պատասխան, որոնցից միայն մեկն է ճիշտ: Ուսանողը պետք է ընտրի ճիշտ պատասխանը: Գործնական առաջադրանքի կատարման ժամանակ սովորողը պետք է արտաքին տեսքից ընտրի փայտանյութերի, գլանափաթեթավոր և մեկուսիչ նյութերի ուսումնական տեսականուց՝ առաջադրվածները: Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, եթե ուսանողը թեսթային առաջադրանքը կատարել է 80 տոկոսի ճշտությամբ, իսկ գործնականն առանց էական անճշտությունների:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Տեսական ուսուցում տանիքագործական ծածկույթների տեխնոլոգիայի կաբինետում և գործնական պարապմունքներ տանիքագործական արհեստանոցում: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական, նորմատիվային և տեղեկատվական գրականություն, տանիքագործական նյութերի տեսականի: Առաջարկելի է տեսաֆիլմերի ցուցադրումը համակարգչով կամ թվային պրոյեկտորով:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>Տեսական ուսուցում՝ 2 ժամ Գործնական պարապմունք՝ 4 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 6	<p>Ներկայացնել աշխատատեղի կազմակերպման և անվտանգության տեխնիկայի կանոնները</p>
Կատարման չափանիշները	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում աշխատատեղի կազմակերպման գործողությունները և դրանց հերթականությունը, 2) ճիշտ է ներկայացնում գլանափաթեթավոր և մածիկային նյութերից տանիքային ծածկույթների պատրաստման ժամանակ անվտանգության տեխնիկայի, հակահրդեհային պաշտպանության և

	էկոլոգիական անվտանգության առանձնահատկությունները (գիտի ստացիոնար կաթսաներից ,գազային բալոններից օգտվելու կանոնները,տաք մածիկների տեղափոխման և տեղադրման կանոնները և այլն):
Գնահատման միջոց	Արդյունքի յուրացումը գնահատվում է թեսթային և գործնական առաջադրանքի միջոցով: Թեսթի յուրաքանչյուր հարցին հետևում է 3 պատասխան, որոնցից միայն մեկն է ճիշտ: Ուսանողը պետք է ընտրի ճիշտ պատասխանը: Գործնական առաջադրանքի կատարման ժամանակ սովորողը պետք է ցուցադրի տանիքային տարբեր աշխատանքների կատարման համար աշխատատեղի կազմակերպման գործողությունները, գազային բալոններից օգտվելու, տաք մածիկներ տեղափոխելու և տեղադրելու գործողությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Տեսական ուսուցում տանիքագործական ծածկույթների տեխնոլոգիայի կաբինետում և գործնական պարապմունքներ տանիքագործական արհեստանոցում: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական, նորմատիվային և տեղեկատվական գրականություն, տանիքագործական նյութերի, գործիքների, գույքի , արտահագուստի, պաշտպանիչ միջոցների պաշար:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 4 ժամ Գործնական պարապմունք՝ 4 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՈՉ ՄԵՏԱՂԱԿԱՆ ԵՎ ՄԱՆՐԱՀԱՏԱՎՈՐ ՆՅՈՒԹԵՐԻՑ ՏԱՆԻՔԱՅԻՆ ԾԱԾԿՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ»	
Մոդուլի դասիչը	ՏՔԳ 3-12-006
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել տեսական գիտելիքներ և գործնական կարողություններ ոչ մետաղական թերթային և մանրահատավոր նյութերից տանիքային ծածկույթների պատրաստման վերաբերյալ:
Մոդուլի տևողությունը	54 ժամ Տեսական ուսուցում՝ 6 ժամ Գործնական պարապմունք՝ 48 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՏՔԳ 03-012-003՝

	«Աշխատանքի պաշտպանություն» և ՏՔԳ 03-012-004 «Շինարարական գործ» մոդուլները:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է կարողանա՝ <ol style="list-style-type: none"> 1) ներկայացնել տանիքային հենաշերտի և մեկուսիչ շերտերի պատրաստման գործնական կարողություններ, 2) ներկայացնել մանրահատավոր նյութերից տանիքային ծածկույթների պատրաստման գործնական կարողություններ, 3) ներկայացնել ոչ մետաղական թերթավոր նյութերից տանիքային ծածկույթների պատրաստման գործնական կարողություններ, 4) ներկայացնել ոչ մետաղական թերթային և մանրահատավոր ծածկույթներով տանիքներում կիրառվող նյութերի տեսականին, 5) ներկայացնել աշխատատեղի կազմակերպման և անվտանգության տեխնիկայի կանոնները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել տանիքային հենաշերտի և մեկուսիչ շերտերի պատրաստման գործնական կարողություններ
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) տեղադրում է փայտե հենաշերտը համաձայն տեխնոլոգիական քարտի կամ աշխատանքների կատարման նախագծի, 2) իրականացնում է փայտե հենաշերտի մշակում հականեխիչ և հրապաշտպան կազմերով, 3) տեղադրում է մեկուսիչ շերտեր գլանափաթեթավոր նյութերից, 4) տեղադրում է ջերմամեկուսիչ շերտ փափուկ և կոշտ սալային նյութերից 5) ներսի կողմից ծածկում է մեկուսիչ շերտը գիպսակարտոնե և այլ թերթերով:
Գնահատման միջոց	Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական պարապմունքի ընթացքում կատարած աշխատանքի հիման վրա:

	<p>Գործնական իրավիճակում արդյունքի յուրացումը կգնհատվի դրական, եթե՝</p> <p>սովորողն ըստ իրեն տրված առաջադրանքի կարող է իրականացնել փայտե հենաշերտ, մշակել այն հականեխիչ կամ հրապաշտպան կազմերով,</p> <p>կարող է տեղադրել ջրամեկուսիչ, ջերմամեկուսիչ և երեսպատող շերտեր տարբեր նյութերից,</p> <p>բոլոր աշխատանքները կատարված են համապատասխան գործող նորմերի և ստանդարտների՝ պահպանելով աշխատանքի անվտանգության, հրդեհաանվտանգության և բնապահպանական կանոնները:</p>
<p>Մեթոդաբանությունը եվ ռեսուրսները</p>	<p>Գործնական ուսուցում տանիքագործական արհեստանոցում և հենակետային շինարարական օբյեկտներում:</p> <p>Անհրաժեշտ է ունենալ ուսումնական և նորմատիվային գրականություն, աշխատանքներ իրականացնելու համար սղոցված փայտանյութի, գլանափաթեթավոր, կոշտ և փափուկ ջերմամեկուսիչ նյութերի, մեխերի , ամրակների և պաշտպանիչ կազմերի որոշակի պաշար, ինչպես նաև անհրաժեշտ գործիքներ, գույք, արտահագուստ, պաշտպանիչ միջոցներ:</p>
<p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</p>	<p>Գործնական ուսուցում՝ 12 ժամ</p>
<p>Ուսումնառության արդյունք 2</p>	<p>Ներկայացնել մանրահատավոր նյութերից տանիքային ծածկույթների պատրաստման գործնական կարողություններ</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<ol style="list-style-type: none"> 1) տեղադրում է տանիքային ծածկույթ խեցեգործական կղմինդրից, 2) տեղադրում է տանիքային ծածկույթ ցեմենտավազային կղմինդրից, 3) տեղադրում է տանիքային ծածկույթ մետաղակղմինդրից, 4) տեղադրում է տանիքային ծածկույթ բիտումային սալիկներից, 5) մանրահատավոր նյութերից տանիքաներում իրականացնում է տանիքի առանձին տարրեր՝ պիպեր, ցվիքներ, հոսանոցներ, հոսարաններ և այլն:

<p>Գնահատման միջոց</p>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական պարապմունքի ընթացքում կատարած աշխատանքի հիման վրա:</p> <p>Գործնական իրավիճակում արդյունքի յուրացումը կգնահատվի դրական, եթե՝</p> <p>սովորողն ըստ իրեն տրված առաջադրանքի կարող է իրականացնել տանիքային ծածկույթներ տարբեր տեսակի կղմինդրներից, բիտումային սալիկներից,</p> <p>կարող է իրականացնել տանիքի առանձին գծային կամ հատավոր տարրեր,</p> <p>բոլոր աշխատանքները կատարված են համապատասխան գործող նորմերի և ստանդարտների՝ պահպանելով աշխատանքի անվտանգության, հրդեհաանվտանգության և բնապահպանական կանոնները:</p>
<p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p>	<p>Գործնական ուսուցում տանիքագործական արհեստանոցում և հենակետային շինարարական օբյեկտներում: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական և նորմատիվային գրականություն, աշխատանքներ իրականացնելու համար կղմինդրների, ամրակային նյութերի և մոնտաժային տարրերի որոշակի պաշար, ինչպես նաև անհրաժեշտ գործիքներ, գույք, արտահագուստ, պաշտպանիչ միջոցներ:</p>
<p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</p>	<p>Գործնական պարապմունք՝ 14 ժամ</p>
<p>Ուսումնառության արդյունք 3</p>	<p>Ներկայացնել ոչ մետաղական թերթավոր նյութերից տանիքային ծածկույթների պատրաստման գործնական կարողություններ</p>
<p>Կատարման չափանիշները</p>	<ol style="list-style-type: none"> 1) տեղադրում է տանիքային ծածկույթ ասբոցեմենտային ալիքածն թերթերից, 2) տեղադրում է տանիքային ծածկույթ բիտումային ալիքածն թերթերից, 3) իրականացնում է տանիքային ծածկույթ պոլիմերային ալիքածն թերթերից, 4) թերթային ծածկույթով տանիքներում իրականացնում է տանիքի առանձին տարրեր՝ պիպեր, ցվիքներ, հոսանոցներ, հոսարաններ, ջրահեռացման համակարգեր, խողովակների, երդիկների, պատուհանների,

	խողովակների հետ համան հանգույցներ և այլն, 5) վերահսկում է ոչ մետաղական թերթավոր նյութերից ծածկույթների իրականացման որակը, կարող է հայտնաբերել և վերացնել արատները:
Գնահատման միջոց	Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական պարապմունքի ընթացքում կատարած աշխատանքի հիման վրա: Գործնական իրավիճակում արդյունքի յուրացումը կգնահատվի դրական, եթե՝ <ul style="list-style-type: none"> • սովորողն ըստ իրեն տրված առաջադրանքի կարող է տեղադրել տանիքային ծածկույթներ տարբեր տեսակի ոչ մետաղական թերթավոր նյութերից, • կարող է տեղադրել առանձին գծային և հատավոր տանիքային տարրեր, • կարող է վերահսկել աշխատանքների կատարման որակը, • բոլոր աշխատանքները կատարված են համապատասխան գործող նորմերի և ստանդարտների՝ պահպանելով աշխատանքի անվտանգության, հրդեհավտանգության և բնապահպանական կանոնները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Գործնական ուսուցում տանիքագործական արհեստանոցում և հենակետային շինարարական օբյեկտներում: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական և նորմատիվային գրականություն, աշխատանքներ իրականացնելու համար տանիքային ոչ մետաղական թերթավոր նյութերի, ամրակների և մոնտաժային տարրերի պաշար, ինչպես նաև անհրաժեշտ գործիքներ, գույք, արտահագուստ, պաշտպանիչ միջոցներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Գործնական պարապմունք՝ 14 ժամ
Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել ոչ մետաղական թերթային և մանրահատավոր ծածկույթներով տանիքներում կիրառվող նյութերի տեսականին
Կատարման չափանիշները	1) ճիշտ է ներկայացնում կիրառվող փայտանյութերի տեսակները և դրանց տեխնոլոգիական

	<p>հատկությունները,</p> <p>2) ճիշտ է ներկայացնում մեկուսիչ, թերթային և մանրահատավոր նյութերի տեսականին տեղական շուկայում, ինչպես նաև դրանց տեխնիկական հատկությունները, կիրառման ոլորտը, տեղադրման եղանակները,</p> <p>3) ճիշտ է ներկայացնում կիրառվող ամրակային և մոնտաժային տարրերը,</p> <p>4) ճիշտ է ներկայացնում թերթերի և մանրահատավոր նյութերի ամրացման եղանակները՝կախված լանջի թեքությունից:</p>
Գնահատման միջոց	<p>Արդյունքի յուրացումը գնահատվում է թեսթային և գործնական առաջադրանքի միջոցով: Թեսթի յուրաքանչյուր հարցին հետևում է 3 պատասխան, որոնցից միայն մեկն է ճիշտ: Ուսանողը պետք է ընտրի ճիշտ պատասխանը: Գործնական առաջադրանքի կատարման ժամանակ սովորողը պետք է արտաքին տեսքից ընտրի մանրահատավոր, թերթային, գլանափաթեթավոր ջրամեկուսիչ, փափուկ և կոշտ ջերմամեկուսիչ նյութերի , ամրակների և մոնտաժային տարրերի ուսումնական տեսականուց՝ առաջադրվածները: Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, եթե ուսանողը թեսթային առաջադրանքը կատարել է 80 տոկոսի ճշտությամբ, իսկ գործնականն առանց էական անճշտությունների:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Տեսական ուսուցում տանիքագործական ծածկույթների տեխնոլոգիայի կաբինետում և գործնական պարապմունքներ տանիքագործական արհեստանոցում: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական, նորմատիվային և տեղեկատվական գրականություն, տանիքագործական նյութերի տեսականի: Առաջարկելի է տեսաֆիլմերի ցուցադրումը համակարգչով կամ թվային պրոյեկտորով:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>Տեսական ուսուցում՝ 2 ժամ</p> <p>Գործնական պարապմունք՝ 4 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 5	<p>Ներկայացնել աշխատատեղի կազմակերպման և անվտանգության տեխնիկայի կանոնները</p>
Կատարման չափանիշները	<p>1) ճիշտ է ներկայացնում աշխատատեղի կազմակերպման գործողությունները և դրանց հերթականությունը,</p>

	2) ճիշտ է ներկայացնում ոչ մետաղական թերթային և մանրահատավոր նյութերից տանիքային ծածկույթների պատրաստման ժամանակ անվտանգության տեխնիկայի, հակահրդեհային պաշտպանության և էկոլոգիական անվտանգության առանձնահատկությունները (տեղափոխվող սանդուղքներից, գույքային լաստակներից և ճոճերից, պաշտպանիչ գոտիներից օգտվելու կարգը, օդերևութաբանական պայմանների սահմանափակումները և այլն):
Գնահատման միջոց	Արդյունքի յուրացումը գնահատվում է թեսթային և գործնական առաջադրանքի միջոցով: Թեսթի յուրաքանչյուր հարցին հետևում է 3 պատասխան, որոնցից միայն մեկն է ճիշտ: Ուսանողը պետք է ընտրի ճիշտ պատասխանը: Գործնական առաջադրանքի կատարման ժամանակ սովորողը պետք է ցուցադրի տանիքային տարբեր աշխատանքների կատարման համար աշխատատեղի կազմակերպման գործողությունները, գույքային լաստակներից, սանդուղքներից , պաշտպանիչ գոտիներից օգտվելու կարգը:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Տեսական ուսուցում տանիքագործական ծածկույթների տեխնոլոգիայի կաբինետում և գործնական պարապմունքներ տանիքագործական արհեստանոցում: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական, նորմատիվային և տեղեկատվական գրականություն, տանիքագործական նյութերի, գործիքների, գույքի , արտահագուստի, պաշտպանիչ միջոցների պաշար:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 4 ժամ Գործնական պարապմունք՝ 4 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄԵՏԱՂԱԿԱՆ ՏԱՆԻՔԱՅԻՆ ԾԱԾԿՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ»	
Մոդուլի դասիչը	ՏՔԳ 3-12-007
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել տեսական գիտելիքներ և գործնական կարողություններ ոչ մետաղական թերթային և մանրահատավոր նյութերից տանիքային ծածկույթների պատրաստման վերաբերյալ:
Մոդուլի տևողությունը	54 ժամ Տեսական ուսուցում՝ 6 ժամ

	Գործնական պարապմունք՝ 48 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՏԲԳ 03-012-003 «Աշխատանքի պաշտպանություն» և ՏԲԳ 03-012-004 «Շինարարական գործ» մոդուլները:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է կարողանա՝ <ol style="list-style-type: none"> 1) ներկայացնել տանիքային հենաշերտի և մեկուսիչ շերտերի պատրաստման գործնական կարողություններ, 2) ներկայացնել մետաղական թերթերի և առանձին դետալների պատրաստման գործնական կարողություններ, 3) ներկայացնել ցինկապատ կամ սև պողպատե թերթերից տանիքային ծածկույթների պատրաստման գործնական կարողություններ, 4) ներկայացնել մետաղական թերթային ծածկույթներով տանիքներում կիրառվող նյութերի տեսականին, 5) ներկայացնել աշխատատեղի կազմակերպման և անվտանգության տեխնիկայի կանոնները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել տանիքային հենաշերտի և մեկուսիչ շերտերի պատրաստման գործնական կարողություններ
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) տեղադրում է փայտե հենաշերտը համաձայն տեխնոլոգիական քարտի կամ աշխատանքների կատարման նախագծի, 2) իրականացնում է փայտե հենաշերտի մշակում հականեխիչ և հրապաշտպան կազմերով, 3) տեղադրում է մեկուսիչ շերտեր գլանափաթեթավոր նյութերից, 4) տեղադրում է ջերմամեկուսիչ շերտ փափուկ և կոշտ սալային նյութերից 5) ներսի կողմից ծածկում է մեկուսիչ շերտը գիպսակարտոնե և այլ թերթերով:
Գնահատման միջոց	Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական պարապմունքի ընթացքում կատարած աշխատանքի հիման վրա:

	<p>Գործնական իրավիճակում արդյունքի յուրացումը կգնհատվի դրական, եթե՝</p> <p>սովորողն ըստ իրեն տրված առաջադրանքի կարող է իրականացնել փայտե հենաշերտ , մշակել այն հականեխիչ կամ հրապաշտպան կազմերով,</p> <p>կարող է տեղադրել ջրամեկուսիչ, ջերմամեկուսիչ և երեսպատող շերտեր տարբեր նյութերից,</p> <p>բոլոր աշխատանքները կատարված են համապատասխան գործող նորմերի և ստանդարտների՝ պահպանելով աշխատանքի անվտանգության, հրդեհաանվտանգության և բնապահպանական կանոնները:</p>
<p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p>	<p>Գործնական ուսուցում տանիքագործական արհեստանոցում և հենակետային շինարարական օբյեկտներում:</p> <p>Անհրաժեշտ է ունենալ ուսումնական և նորմատիվային գրականություն, աշխատանքներ իրականացնելու համար սղոցված փայտանյութի, գլանափաթեթավոր , կոշտ և փափուկ ջերմամեկուսիչ նյութերի, մեխերի , ամրակների և պաշտպանիչ կազմերի որոշակի պաշար, ինչպես նաև անհրաժեշտ գործիքներ, գույք, արտահագուստ, պաշտպանիչ միջոցներ:</p>
<p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</p>	<p>Գործնական ուսուցում՝ 12 ժամ</p>
<p>Ուսումնառության արդյունք 2</p>	<p>Ներկայացնել մետաղական թերթերի և առանձին դետալների պատրաստման գործնական կարողություններ</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<ol style="list-style-type: none"> 1) պատրաստում է ձևանմուշներ մետաղական թերթային նյութերից, 2) ձևում է ծածկի տարրեր և ձևավոր մասեր ձևանմուշների հիման վրա, 3) հավաքում է տանիքային ծածկի առանձին տարրեր և ձևավոր մասեր, իրականացնում է ծալքային միացումներ, 4) հավաքում է թերթային պատկերներ, 5) միացնում է պատկերները բլրկների տեսքով, 6) պատրաստում է քիվային ցվիքի տարրեր:

<p>Գնահատման միջոց</p>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական պարապմունքի ընթացքում կատարած աշխատանքի հիման վրա:</p> <p>Գործնական իրավիճակում արդյունքի յուրացումը կգնահատվի դրական, եթե՝</p> <p>սովորողն ըստ իրեն տրված առաջադրանքի կատարում է մետաղական տանիքների իրականացման նախապատրաստական աշխատանքներ՝ պատրաստում է ձևանմուշներ և դրանց հիման վրա ծածկի առանձին տարրեր, ձևավոր մասեր,</p> <p>կարող է իրականացնել ծալքային միացումներ, առանձին թերթերից հավաքել պատկերներ, բլոկներ, բոլոր աշխատանքները կատարված են համապատասխան գործող նորմերի և ստանդարտների՝ պահպանելով աշխատանքի անվտանգության, և բնապահպանական կանոնները:</p>
<p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p>	<p>Գործնական ուսուցում տանիքագործական արհեստանոցում և հենակետային շինարարական օբյեկտներում: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական և նորմատիվային գրականություն, աշխատանքներ իրականացնելու համար մետաղական թերթային նյութերի, ամրակների որոշակի պաշար, ինչպես նաև անհրաժեշտ գործիքներ, գույք, արտահագուստ, պաշտպանիչ միջոցներ:</p>
<p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</p>	<p>Գործնական պարապմունք՝ 14 ժամ</p>
<p>Ուսումնառության արդյունք 3</p>	<p>Ներկայացնել ցինկապատ կամ սև պողպատե թերթերից տանիքային ծածկույթների պատրաստման գործնական կարողություններ</p>
<p>Կատարման չափանիշները</p>	<ol style="list-style-type: none"> 1) իրականացնում է քիվային ցվիքների և ջրորոդանների ծածկույթ ցինկապատ կամ սև պողպատե թերթերից, 2) ճիշտ է հաշվարկում ջրորոդանի անհրաժեշտ թեքությունը, 3) իրականացնում է լանջերի ծածկույթներ ցինկապատ կամ սև պողպատե թերթերից, 4) իրականացնում է տանիքային ծածկույթի առանձին տարրեր ցինկապատ կամ սև պողպատե թերթերից

	<p>(պիպեր, գոգնոցներ, խողովակների, երդիկների, պատուհանների հետ համան հանգույցներ, ջրընդունիչ ձագարներ, ջրահեռացման խողովակներ և այլն)</p> <p>5) իրականացնում է պրոֆիլային մետաղական թերթերից տանիքային ծածկույթներ,</p> <p>6) իրականացնում է սև մետաղներից ծածկույթների և առանձին տարրերի ներկում հակակոռոզիոն կազմերով,</p> <p>7) վերահսկում է մետաղական ծածկույթների իրականացման որակը, կարող է հայտնաբերել և վերացնել արատները:</p>
<p>Գնահատման միջոց</p>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական պարապմունքի ընթացքում կատարած աշխատանքի հիման վրա:</p> <p>Գործնական իրավիճակում արդյունքի յուրացումը կգնահատվի դրական, եթե՝</p> <p>սովորողն ըստ իրեն տրված առաջադրանքի կարող է իրականացնել տանիքային լանջերի , քիվային ցվիքների և ջրհորդանների ծածկում մետաղական ցինկապատ և սև մետաղից հարթ թերթերով, կատարում է սև մետաղներից ծածկույթների հակակոռոզիոն մշակում,</p> <p>կարող է իրականացնել տանիքային մետաղական ծածկույթի առանձին տարրեր և հանգույցներ, կարող է իրականացնել պրոֆիլային մետաղական ծածկույթներ,</p> <p>բոլոր աշխատանքները կատարված են համապատասխան գործող նորմերի և ստանդարտների՝ պահպանելով աշխատանքի անվտանգության, հրդեհաանվտանգության և բնապահպանական կանոնները:</p>
<p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p>	<p>Գործնական ուսուցում տանիքագործական արհեստանոցում և հենակետային շինարարական օբյեկտներում: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական և նորմատիվային գրականություն, աշխատանքներ իրականացնելու համար տանիքային մետաղական թերթավոր նյութեր, ամրակների և մոնտաժային տարրերի պաշար, ինչպես նաև անհրաժեշտ գործիքներ, գույք, արտահագուստ, պաշտպանիչ միջոցներ:</p>
<p>Ուսուցման երաշխավորված</p>	<p>Գործնական պարապմունք՝ 14 ժամ</p>

Ժամաքանակը	
Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել մետաղական թերթային ծածկույթներով տանիքներում կիրառվող նյութերի տեսականին
Կատարման չափանիշները	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում կիրառվող փայտանյութերի տեսակները և դրանց տեխնոլոգիական հատկությունները, 2) ճիշտ է ներկայացնում մեկուսիչ, մետաղական հարթ և պրոֆիլային թերթերի տեսականին տեղական շուկայում, ինչպես նաև դրանց տեխնիկական հատկությունները, կիրառման ոլորտը, տեղադրման եղանակները, 3) ճիշտ է ներկայացնում կիրառվող ամրակային և մոնտաժային տարրերը, 4) ճիշտ է ներկայացնում թերթերի ամրացման եղանակները:
Գնահատման միջոց	Արդյունքի յուրացումը գնահատվում է թեսթային և գործնական առաջադրանքի միջոցով: Թեսթի յուրաքանչյուր հարցին հետևում է 3 պատասխան, որոնցից միայն մեկն է ճիշտ: Ուսանողը պետք է ընտրի ճիշտ պատասխանը: Գործնական առաջադրանքի կատարման ժամանակ սովորողը պետք է արտաքին տեսքից ընտրի մետաղական թերթային, կոշտ և փափուկ ջերմամեկուսիչ, գլանափաթեթավոր ջրամեկուսիչ նյութերի, ամրակների և մոնտաժային տարրերի ուսումնական տեսականուց՝ առաջադրվածները: Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, եթե ուսանողը թեսթային առաջադրանքը կատարել է 80 տոկոսի ճշտությամբ, իսկ գործնականն առանց էական անճշտությունների:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Տեսական ուսուցում տանիքագործական ծածկույթների տեխնոլոգիայի կաբինետում և գործնական պարապմունքներ տանիքագործական արհեստանոցում: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական, նորմատիվային և տեղեկատվական գրականություն, տանիքագործական նյութերի տեսականի: Առաջարկելի է տեսաֆիլմերի ցուցադրումը համակարգչով կամ թվային պրոյեկտորով:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 2 ժամ Գործնական պարապմունք՝ 4 ժամ

Ուսումնառության արդյունք 5	Ներկայացնել աշխատատեղի կազմակերպման և անվտանգության տեխնիկայի կանոնները
Կատարման չափանիշները	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում աշխատատեղի կազմակերպման գործողությունները և դրանց հերթականությունը, 2) ճիշտ է ներկայացնում մետաղական տանիքային ծածկույթների պատրաստման ժամանակ անվտանգության տեխնիկայի, հակահրդեհային պաշտպանության և էկոլոգիական անվտանգության առանձնահատկությունները (գույքային հավաքովի-քանդովի հարթակներից, մետաղական տակդիրներից, պաշտպանիչ գոտիներից օգտվելու կարգը, օդերևութաբանական պայմանների սահմանափակումները և այլն):
Գնահատման միջոց	Արդյունքի յուրացումը գնահատվում է թեսթային և գործնական առաջադրանքի միջոցով: Թեսթի յուրաքանչյուր հարցին հետևում է 3 պատասխան, որոնցից միայն մեկն է ճիշտ: Ուսանողը պետք է ընտրի ճիշտ պատասխանը: Գործնական առաջադրանքի կատարման ժամանակ սովորողը պետք է ցուցադրի տանիքային տարբեր աշխատանքների կատարման համար աշխատատեղի կազմակերպման գործողությունները, գույքային հավաքովի-քանդովի հարթակներից, մետաղական տակդիրներից, պաշտպանիչ գոտիներից օգտվելու կարգը:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Տեսական ուսուցում տանիքագործական ծածկույթների տեխնոլոգիայի կաբինետում և գործնական պարապմունքներ տանիքագործական արհեստանոցում: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական, նորմատիվային և տեղեկատվական գրականություն, տանիքագործական նյութերի, գործիքների, գույքի , արտահագուստի, պաշտպանիչ միջոցների պաշար:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 4 ժամ Գործնական պարապմունք՝ 4 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՏԱՆԻՔԱՅԻՆ ԾԱԾԿՈՒՅԹՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ»	
Մոդուլի դասիչը	ՏԲԳ 3-12-008
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել տեսական գիտելիքներ և գործնական կարողություններ տանիքային ծածկույթների արատների հայտնաբերման, տանիքային ծածկույթների տեղային կամ լրիվ

	փոխարինման վերաբերյալ:
Մոդուլի տևողությունը	54 ժամ Տեսական ուսուցում՝ 12 ժամ Գործնական պարապմունք՝ 42 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՏՔԳ 03-012-003 «Աշխատանքի պաշտպանություն» և ՏՔԳ 03-012-004 «Շինարարական գործ» մոդուլները:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է կարողանա՝ 1) ներկայացնել տանիքնային ծածկույթների և կառուցվածքների վերանորոգման եղանակները և գործընթացների հաջորդականությունը, 2) ներկայացնել տանիքային ծածկույթների և կառուցվածքային տարրերի հիմնական արատները, 3) ներկայացնել տանիքների վերանորոգման աշխատանքների գործնական կարողություններ:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել տանիքնային ծածկույթների և կառուցվածքների վերանորոգման եղանակները և գործընթացների հաջորդականությունը
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում գլանափաթեթավոր նյութերից տանիքային ծածկույթների հանման և փոխարինման եղանակները և գործընթացների հաջորդականությունը, 2) ճիշտ է ներկայացնում ոչ մետաղական թերթային և մանրահատավոր նյութերից տանիքային ծածկույթների հանման և փոխարինման եղանակները և գործընթացների հաջորդականությունը, 3) ճիշտ է ներկայացնում մետաղական թերթային նյութերից տանիքային ծածկույթների հանման և փոխարինման եղանակները և գործընթացների հաջորդականությունը, 4) ճիշտ է ներկայացնում ծածկերի և ծպեղների ուժեղացման եղանակները

	5) տարբերում է տանիքային ծածկույթների ,կապիտալ վերանորոգումե և ընթացիք վերանորոգումե հասկացությունները:
Գնահատման միջոց	Արդյունքի յուրացումը գնահատվում է թեսթային և գործնական առաջադրանքի միջոցով: Թեսթի յուրաքանչյուր հարցին հետևում է 3 պատասխան, որոնցից միայն մեկն է ճիշտ: Սովորողը պետք է ընտրի ճիշտ պատասխանը: Գործնական առաջադրանքի կատարման ժամանակ սովորողը ստենդի վրա ցուցադրում է արհեստանոցային պահյմաններում հնարավոր վերանորոգման աշխատանքների մի քանի առաջադրված տեսակ՝օրինակ թերթային կամ հատավոր նյութերի հանում կավարամածից, ծպեղների և կանգնակների ուժեղացում, կարկատանների տեղադրում, հանված նյութերի պահեստավորում և այլն: Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, եթե ուսանողը թեսթային առաջադրանքը կատարել է 80 տոկոսի ճշտությամբ, իսկ գործնականն՝ առանց էական անճշտությունների:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Տեսական ուսուցում տանիքային ծածկույթների տեխնոլոգիայի կաբինետում և գործնական ուսուցում տանիքագործական արհեստանոցում: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական և նորմատիվային գրականություն, վերանորոգման աշխատանքներ իրականացնելու համար ստենդներ, ինչպես նաև անհրաժեշտ գործիքներ, գույք, արտահագուստ, պաշտպանիչ միջոցներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 6 ժամ, Գործնական պարապմունք՝ 6 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել տանիքային ծածկույթների և կառուցվածքային տարրերի հիմնական արատները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում տանիքային ծածկույթի հիմնական արատները (մեխանիկական, կենսաբանական, քիմիական) և դրանց վերացման եղանակները, 2) ճիշտ է ներկայացնում տանիքային կառուցվածքների պիտանելիության որոշման եղանակները, 3) ճիշտ է ներկայացնում ,նստածե տանիքների վերանորոգման առանձնահատկությունները:
Գնահատման միջոց	Արդյունքի յուրացումը գնահատվում է թեսթային և գործնական առաջադրանքի միջոցով: Թեսթի յուրաքանչյուր

	<p>հարցին հետևում է 3 պատասխան, որոնցից միայն մեկն է ճիշտ: Սովորողը պետք է ընտրի ճիշտ պատասխանը: Գործնական առաջադրանքի կատարման ժամանակ սովորողը ստենդի վրա ցուցադրում տանիքային ծածկույթների մեխանիկական, քիմիական կամ կենսաբանական արատների վերացման գործողությունները: Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, եթե ուսանողը թեսթային առաջադրանքը կատարել է 80 տոկոսի ճշտությամբ, իսկ գործնականն՝ առանց էական անճշտությունների:</p>
<p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p>	<p>Տեսական ուսուցում տանիքային ծածկույթների տեխնոլոգիայի կաբինետում և գործնական ուսուցում տանիքագործական արհեստանոցում: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական և նորմատիվային գրականություն, վերանորոգման աշխատանքներ իրականացնելու համար ստենդներ, քիմիական կազմեր և լուծույթներ, մածիկներ, ինչպես նաև անհրաժեշտ գործիքներ, գույք, արտահագուստ, պաշտպանիչ միջոցներ:</p>
<p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</p>	<p>Տեսական ուսուցում՝ 6 ժամ, Գործնական պարապմունք՝ 6 ժամ</p>
<p>Ուսումնառության արդյունք 3</p>	<p>Ներկայացնել տանիքների վերանորոգման աշխատանքների գործնական կարողություններ</p>
<p>Կատարման չափանիշները</p>	<ol style="list-style-type: none"> 1) ապամոնտաժում է տանիքի վնասված և մաշված կառուցվածքային տարրերը, 2) տեղադրում է տանիքի նոր տարրեր, 3) փոխարինում է հեծաններ, ծպեղնատուքեր, թեքաններ, կավարամածի վնասված մասեր, 4) մաքրում է վնասված հիմնաշերտը, իրականացնում է նոր հարթեցնող շերտ և դեֆորմացիոն-նստվածքային կարաններ, 5) մաքրում և չորացնում է տանիքային ծածկի առանձին անցքերը և ճեղքերը, 6) մածկում է առանձին անցքերը և ճեղքերը հակակոռոզիոն ծեփամածիկով, 7) դնում է կարկատաններ տանիքային ծածկի նյութից , ապակեգործվածքից, 8) ներկապատում է ծածկույթի վնասված մասերը, 9) քանդում է (հանում է) տանիքային ծածկն ամբողջությամբ կամ առանձին տեղամասերում,

	<p>10) տեսակավորում է հանված թերթային և հատավոր նյութերը կրկնակի օգտագործման նպատակով,</p> <p>11) մաքրում և չորացնում է հատավոր նյութերը կրկնակի օգտագործման համար,</p> <p>12) բացում է պատկերների ծալքային միացումները, կտրում, ուղղում, մաքրում, եզրահատում է կրկնակի օգտագործման մետաղական թերթերը,</p> <p>13) իրականացնում է նոր ծածկ ամբողջությամբ կամ առանձին տեղամասերում,</p> <p>14) փոխարինում է ծածկի մեկ տեսակը մյուսով,</p> <p>15) ապամոնտաժում և փոխարինում է ջրահեռացման համակարգն ամբողջությամբ կամ առանձին հատվածներում,</p> <p>16) վերահսկում է վերանորոգման աշխատանքների իրականացման որակը, կարող է հայտնաբերել և վերացնել արատները:</p>
<p>Գնահատման միջոց</p>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական պարապմունքի ընթացքում կատարած աշխատանքի հիման վրա:</p> <p>Գործնական իրավիճակում արդյունքի յուրացումը կգնահատվի դրական, եթե՝</p> <p>սովորողն ըստ իրեն տրված առաջադրանքի կարող է իրականացնել տանիքային կառուցվածքների և ծածկույթների ապամոնտաժում, դրանց լրիվ կամ մասնակի փոխարինում, տանիքի ծածկույթի փոխարինում այլ տեսակի ծածկույթով, տեղային նորոգումների իրականացում, ապամոնտաժված նյութերի պահեստավորում և դրանց պիտանի մասի նախապատրաստում կրկնակի օգտագործման համար, կարող է փոխարինել գրահեռացման համակարգը,</p> <p>կարող է վերահսկել աշխատանքների որակը,</p> <p>բոլոր աշխատանքները կատարված են համապատասխան գործող նորմերի և ստանդարտների՝ պահպանելով աշխատանքի անվտանգության, հրդեհասանվտանգության և բնապահպանական կանոնները:</p>
<p>Մեթոդաբանությունը և</p>	<p>Գործնական ուսուցում տանիքագործական արհեստանոցում և հենակետային շինարարական օբյեկտներում: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական և նորմատիվային գրականություն, աշխատանքներ իրականացնելու համար</p>

ռեսուրսները	տանիքագործական նյութեր, ամրակների և մոնտաժային տարրերի պաշար, ինչպես նաև անհրաժեշտ գործիքներ, գույք, արտահագուստ, պաշտպանիչ միջոցներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Գործնական պարապմունք՝ 30 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՏԱՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	ՏՔԳ 3-12-009
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողի կողմից տանիքագործական աշխատանքներում կիրառվող փականագործական հմտությունների ձեռքբերումը և անհրաժեշտ տեսական գիտելիքների յուրացումը:
Մոդուլի տևողությունը	36 ժամ Տեսական ուսուցում՝ 8 ժամ Գործնական պարապմունք՝ 28 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՏՔԳ 03-012-001՝ «Շինարարական գծագրության հիմունքները» մոդուլը:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝ 1) իմանա ատաղձագործական աշխատանքներում կիրառվող նյութերը և դրանց հատկությունները, 2) կարող է ներկայացնել ատաղձագործական աշխատանքների կատարման եղանակները, 3) կարող է ներկայացնել ատաղձագործական աշխատանքների գործնական կարողություններ:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Իմանալ ատաղձագործական աշխատանքներում կիրառվող նյութերը և դրանց հատկությունները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում փայտանյութերի տեսակները, 2) ճիշտ է ներկայացնում փայտանյութերի արատները, հատկությունները, կիրառման ոլորտը,

	3) ատաղձագործական աշխատանքներում կիրառվող ամրակային և օժանդակ նյութերը:
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ	Արդյունքի յուրացումը գնահատվում է թեսթային և գործնական առաջադրանքի միջոցով: Թեսթի յուրաքանչյուր հարցին հետևում է 3 պատասխան, որոնցից միայն մեկն է ճիշտ: Սովորողը պետք է ընտրի ճիշտ պատասխանը: Գործնական առաջադրանքի կատարման ժամանակ սովորողը նյութերի ներկայացված տեսականուց առանձնացնում է առաջադրված տեսակի փայտանյութը, բնորոշում է դրա արատները և հատկությունները, ընտրում է առաջադրված ամրակային և օժանդակ նյութերը: Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, եթե ուսանողը թեսթային առաջադրանքը կատարել է 80 տոկոսի ճշտությամբ, իսկ գործնականն՝ առանց էական անճշտությունների:
ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ	Տեսական և գործնական ուսուցում տանիքագործական արհեստանոցի ատաղձագործական տեղամասում: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական և նորմատիվային գրականություն, անհրաժեշտ սարքավորումներ, գործիքներ, տարբեր տեսակի փայտանյութի, ամրակային և օժանդակ նյութերի պաշար, գույք, արտահագուստ, պաշտպանիչ միջոցներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 4 ժամ, Գործնական պարապմունք՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել ատաղձագործական աշխատանքների կատարման եղանակները
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում փայտանյութի չափանշման և գծանշման եղանակները, 2) ճիշտ է ներկայացնում տախտակների , փայտե նախապատրաստվածքների և կառուցվածքային տարրերի միացման և ամրացման եղանակները, 3) ճիշտ է ներկայացնում հեծանների, ֆերմանների, կիսաֆերմանների տեղադրման եղանակները, 4) ճիշտ է ներկայացնում կավարամածի և զուգակավարամածի պատրաստման եղանակները, 5) ճիշտ է ներկայացնում ատաղձագործական աշխատանքների դեֆեկտների հայտնաբերման և վերացման եղանակները:

Գնահատման միջոց	Արդյունքի յուրացումը գնահատվում է թեսթային և գործնական առաջադրանքի միջոցով: Թեսթի յուրաքանչյուր հարցին հետևում է 3 պատասխան, որոնցից միայն մեկն է ճիշտ: Սովորողը պետք է ընտրի ճիշտ պատասխանը: Գործնական առաջադրանքի կատարման ժամանակ սովորողը կատարում նմուշի գծանշում և չափանշում, փայտե տարրերի միացում և ամրացում, ստենդի վրա հավաքում է կավարամածի կամ զուգակավարամածի դրվագ, վերացնում է ատաղձագործական աշխատանքների դեֆեկտները: Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, եթե ուսանողը թեսթային առաջադրանքը կատարել է 80 տոկոսի ճշտությամբ, իսկ գործնականն՝ առանց էական անճշտությունների:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Տեսական և գործնական ուսուցում տանիքագործական արհեստանոցի ատաղձագործական տեղամասում: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական և նորմատիվային գրականություն, անհրաժեշտ սարքավորումներ, գործիքներ, տարբեր տեսակի փայտանյութի, ամրակային և օժանդակ նյութերի պաշար, գույք, արտահագուստ, պաշտպանիչ միջոցներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 4 ժամ, Գործնական պարապմունք՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել տանիքների վերանորոգման աշխատանքների գործնական կարողություններ
Կատարման չափանիշները	<ol style="list-style-type: none"> 1) նախապատրաստում է փայտանյութը՝ հատում, սղոցում, ոնդայում, տաշում, շուշաթղթում, 2) չափանշում և գծանշում է փայտանյութը նախապատրաստվածքների համար, 3) կատարում է փայտանյութի գայլիկոնում և թրծում, 4) միացնում և ամրացնում է նախապատրաստվածքները տարբեր եղանակներով (երիտային, գամային, հեղույսային և այլն), 5) պատրաստում է պարզ և բաղադրյալ հեծաններ, ֆերմաներ, 6) պատրաստում է կավարամած և զուգակավարամած, 7) պատրաստում և քսում է փայտե կոնստրուկցիաներին հականեխիչ և հրապաշտպան կազմեր,

	8) վերահսկում է ատաղձագործական աշխատանքների կատարման որակը:
Գնահատման միջոց	Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական պարապմունքի ընթացքում կատարած աշխատանքի հիման վրա: Գործնական իրավիճակում արդյունքի յուրացումը կգնահատվի դրական, եթե՝ սովորողն ըստ իրեն տրված առաջադրանքի կարող է իրականացնել փայտանյութի հատում, սղոցում, ոնդայում, տաշում, շուշաթղթում, գայլիկոնում և թրծում , կարող է իրականացնել երիտային, գամային , հեղույսային միացումներ, կարող է պատրաստել փայտե կառուցվածքներ և իրականացնել դրանց պաշտպանիչ պատվածքներ, կարող է վերահսկել աշխատանքների որակը, բոլոր աշխատանքները կատարված են համապատասխան գործող նորմերի և ստանդարտների՝ պահպանելով աշխատանքի անվտանգության, հրդեհաանվտանգության և բնապահպանական կանոնները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Գործնական ուսուցում տանիքագործական արհեստանոցի ատաղձագործական տեղամասում: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական և նորմատիվային գրականություն, անհրաժեշտ սարքավորումներ, գործիքներ, տարբեր տեսակի փայտանյութի, ամրակային և օժանդակ նյութերի պաշար, գույք, արտահագուստ, պաշտպանիչ միջոցներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Գործնական պարապմունք՝ 20 ժամ
Մ Ո Ղ ՈՒ Լ Ի Ա Ն Վ Ա Ն ՈՒ Մ Ը «Փ Ա Կ Ա Ն Ա Գ Ո Ր Ծ Ա Կ Ա Ն Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք Ն Ե Ր»	
Մոդուլի դասիչը	ՏՔԳ 3-12-010
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել տեսական գիտելիքներ և գործնական կարողություններ տանիքագործական աշխատանքներում կիրառվող ատաղձագործական հմտությունների ձեռքբերումը և

	անհրաժեշտ տեսական գիտելիքների յուրացումը
Մոդուլի տևողությունը	36 ժամ Տեսական ուսուցում` 8 ժամ , Գործնական պարապմունք` 28 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՏՔԳ 03-012-001՝, «Շինարարական գծագրության հիմունքները» մոդուլը:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է կարողանա` 1) ներկայացնել փականագործական աշխատանքներում կիրառվող նյութերը և դրանց հատկությունները, 2) ներկայացնել փականագործական աշխատանքների կատարման եղանակները, 3) իրականացնել փականագործական աշխատանքների գործնական կարողություններ:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել փականագործական աշխատանքներում կիրառվող նյութերը և դրանց հատկությունները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում թերթային մետաղական նյութերը, դրանց տեսակները, տեխնիկական հատկությունները, կիրառման ոլորտը, 2) ճիշտ է ներկայացնում հատավոր մետաղական նյութերը, դրանց տեսակները, տեխնիկական հատկությունները, կիրառման ոլորտը:
Գնահատման միջոց	Արդյունքի յուրացումը գնահատվում է թեսթային և գործնական առաջադրանքի միջոցով: Թեսթի յուրաքանչյուր հարցին հետևում է 3 պատասխան, որոնցից միայն մեկն է ճիշտ: Սովորողը պետք է ընտրի ճիշտ պատասխանը: Գործնական առաջադրանքի կատարման ժամանակ սովորողը նյութերի ներկայացված տեսականուց առանձնացնում է առաջադրված տեսակի թերթային կամ հատավոր մետաղական նյութերը, բնորոշում է դրանաց հատկությունները և կիրառման ոլորտը: Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, եթե ուսանողը թեսթային

	առաջադրանքը կատարել է 80 տոկոսի ճշտությամբ, իսկ գործնականն՝ առանց էական անճշտությունների:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Տեսական և գործնական ուսուցում տանիքագործական արհեստանոցի փականագործական տեղամասում: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական և նորմատիվային գրականություն, անհրաժեշտ սարքավորումներ, գործիքներ, տարբեր տեսակի թերթային և հատավոր մետաղական նյութերի պաշար, գույք, արտահագուստ, պաշտպանիչ միջոցներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 4 ժամ, Գործնական պարապմունք՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել փականագործական աշխատանքների կատարման եղանակները
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում սառը գամակցման տեխնոլոգիան, 2) ճիշտ է ներկայացնում մետաղների զոդման տեխնոլոգիան, 3) ճիշտ է ներկայացնում մետաղների փականագործական մշակման եղանակները, 4) ճիշտ է ներկայացնում բարակ մետաղական թերթի և թիթեղի հետ աշխատանքի առանձնահատկությունները, 5) ճիշտ է ներկայացնում փականագործական աշխատանքների դեֆեկտների հայտնաբերման և վերացման եղանակները, 6) ճիշտ է ներկայացնում փականագործական սարքավորումներից, գործիքներից և հարմարանքներից օգտվելու կարգը, 7) ճիշտ է ներկայացնում անվտանգության տեխնիկայի կանոնները փականագործական աշխատանքներում:
Գնահատման միջոց	Արդյունքի յուրացումը գնահատվում է թեսթային և գործնական առաջադրանքի միջոցով: Թեսթի յուրաքանչյուր հարցին հետևում է 3 պատասխան, որոնցից միայն մեկն է ճիշտ: Սովորողը պետք է ընտրի ճիշտ պատասխանը: Գործնական առաջադրանքի կատարման ժամանակ սովորողն ըստ առաջադրանքի կատարում նմուշի գամակցում, զոդում կամ փականագործական մշակում, ցուցադրում է մետաղի մշակման դեֆեկտների վերացման

	կարողություններ: Գործնական աշխատանքի կատարման ժամանակ պահպանում է անվտանգության տեխնիկայի կանոնները: Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, եթե ուսանողը թեսթային առաջադրանքը կատարել է 80 տոկոսի ճշտությամբ, իսկ գործնականն՝ առանց էական անճշտությունների:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Տեսական և գործնական ուսուցում տանիքագործական արհեստանոցի փականագործական տեղամասում: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական և նորմատիվային գրականություն, անհրաժեշտ սարքավորումներ, գործիքներ, տարբեր տեսակի մետաղական թերթային և հատավոր, ամրակային և զոդման նյութերի պաշար, գույք, արտահագուստ, պաշտպանիչ միջոցներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 4 ժամ, Գործնական պարապմունք՝ 6 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Իրականացնում է փականագործական աշխատանքների գործնական կարողություններ
Կատարման չափանիշները	<ol style="list-style-type: none"> 1) ուղղում, գծանշում, չափանշում, կտրում, հատում, սղոցում, գայլիկոնում, եզրահարթում, տաշում, ծռում է մետաղական թերթեր և նախապատրաստվածքներ, 2) պարուրակահանում է մետաղական նախապատրաստվածքները, 3) կատարում է ծալքային միացումներ, դարձաձալում է մետաղական լարը, իրականացնում է կոշտության գլանիկներ, 4) եզրակում, ոլորածռում է թիթեղային նախապատրաստվածքներ, 5) կատարում է սառը գամակցում և զոդում, 6) պատրաստում է պարզ փականագործական և թիթեղային իրեր, 7) վերահսկում է փականագործական աշխատանքների կատարման որակը:
Գնահատման միջոց	Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական պարապմունքի ընթացքում կատարած աշխատանքի հիման վրա: Գործնական իրավիճակում արդյունքի յուրացումը կգնահատվի դրական, եթե՝

	<p>սովորողն ըստ իրեն տրված առաջադրանքի կարող է իրականացնել մետաղական նյութի ուղղում, գծանշում, չափանշում, կտրում, հատում, սղոցում, գայլիկոնում, եզրահարթում, տաշում, ծռում, պարուրակահանում,</p> <p>իրականացնում է ծալքային և զողված միացումներ, սառը գամակցում,</p> <p>պատրաստում է փականագործական իրեր,</p> <p>բոլոր աշխատանքները կատարված են համապատասխան գործող նորմերի և ստանդարտների՝ պահպանելով աշխատանքի անվտանգության, հրդեհաանվտանգության և բնապահպանական կանոնները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Գործնական ուսուցում տանիքագործական արհեստանոցի ատաղձագործական տեղամասում: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական և նորմատիվային գրականություն, անհրաժեշտ հաստոցներ, սարքավորումներ, գործիքներ, տարբեր տեսակի փայտանյութի, ամրակային և օժանդակ նյութերի պաշար, գույք, արտահագուստ, պաշտպանիչ միջոցներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Գործնական պարապմունք՝ 18 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՃՈՊԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	ՏՔԳ 3-12-011
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողի կողմից տանիքագործական նյութերի և սարքավորումների ճոպանման հմտությունների ձեռքբերումը և անհրաժեշտ տեսական գիտելիքների յուրացումը
Մոդուլի տևողությունը	36 ժամ Տեսական ուսուցում՝ 8 ժամ, Գործնական պարապմունք՝ 28 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՏՔԳ 03-012-004՝,

	«Շինարարական գործ» մոդուլը:
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է կարողանա՝ <ol style="list-style-type: none"> 1) ներկայացնել ճոպանների և բեռնակալիչ հարմարանքների տեսակները, դրանց կիրառման ոլորտը 2) ներկայացնել տանիքագործական աշխատանքներում ճոպանման աշխատանքների կատարման կարգը , 3) ներկայացնել տանիքագործական աշխատանքներում կիրառվող նյութերի և սարքավորումների ճոպանման կատարման կարգը:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված չափանիշների բավարարման կարգի և ակադեմիկական արդյունքի համար սահմանված չափանիշների բավարարման կարգի և ակադեմիկական արդյունքի համար սահմանված չափանիշների բավարարման կարգը:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել ճոպանների և բեռնակալիչ հարմարանքների տեսակները, դրանց կիրառման ոլորտը
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում ունիվերսալ ճոպանների տեսակները (երկհանգուցանի, օղակաձև, երկհանգուցանի՝ ականոցով, օղակաձև՝ականոցով), դրանցից օգտվելու կարգը, կիրառման ոլորտը, 2) ճիշտ է ներկայացնում ճյուղավոր ճոպանների տեսակները (երկճյուղ, եռաճյուղ, քառաճյուղ՝հասարակ և հավասարակշռված), դրանցից օգտվելու կարգը, կիրառման ոլորտը, 3) ճիշտ է ներկայացնում լայնակների տեսակները, դրանցից օգտվելու կարգը, կիրառման ոլորտը, 4) ճիշտ է ներկայացնում բեռնակալիչ հարմարանքները՝ կեռիկները, հանգուցները, հանգուցողակները, զսպանակեռիկները:
Գնահատման միջոց	Արդյունքի յուրացումը գնահատվում է թեսթային և գործնական առաջադրանքի միջոցով: Թեսթի յուրաքանչյուր հարցին հետևում է 3 պատասխան, որոնցից միայն մեկն է ճիշտ: Սովորողը պետք է ընտրի ճիշտ պատասխանը: Գործնական առաջադրանքի կատարման ժամանակ սովորողն առանձնացնում է ունիվերսալ կամ ճյուղային ճոպանի առաջադրված տեսակը, ցուցադրում բեռի ամրացման կարգը: Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, եթե ուսանողը թեսթային առաջադրանքը կատարել է 80 տոկոսի ճշտությամբ, իսկ գործնական՝ առանց էական անճշտությունների:

Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Տեսական և գործնական ուսուցում տանիքագործական արհեստանոցում և հենակետային օբյեկտներում: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական և նորմատիվային գրականություն, ունիվերսալ և ճյուղային ճոպանների և բեռնակալիչ հարմարանքների տեսականի, բեռների նմուշներ, գործիքներ, գույք, արտահագուստ, պաշտպանիչ միջոցներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 4 ժամ Գործնական պարապմունք՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել տանիքագործական աշխատանքներում ճոպանման աշխատանքների կատարման կարգը
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում ճոպանման և բեռների կապման սխեմաները, 2) ճիշտ է ներկայացնում բարձրության վրա բեռի ընդունման և տրման եղանակները, 3) ճիշտ է ներկայացնում տրանսպորտային միջոցներից բեռի ընդունման եղանակները, 4) ճիշտ է ներկայացնում տրանսպորտային միջոցներ բեռի տրման եղանակները, 5) ճիշտ է ներկայացնում ձայնային և նշանային ազդանշանման կարգը, 6) ճիշտ է ներկայացնում ճոպանման աշխատանքների հսկման կարգը, 7) ճիշտ է ներկայացնում անվտանգության տեխնիկայի կանոնները ճոպանման աշխատանքներում:
Գնահատման միջոց	Արդյունքի յուրացումը գնահատվում է թեսթային և գործնական առաջադրանքի միջոցով: Թեսթի յուրաքանչյուր հարցին հետևում է 3 պատասխան, որոնցից միայն մեկն է ճիշտ: Սովորողը պետք է ընտրի ճիշտ պատասխանը: Գործնական առաջադրանքի կատարման ժամանակ սովորողն ըստ առաջադրանքի կատարում է բեռների ճոպանման, բեռնման, բեռնաթափման մի քանի գործընթաց: Գործնական աշխատանքի կատարման ժամանակ պահպանում է անվտանգության տեխնիկայի կանոնները: Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, եթե ուսանողը թեսթային առաջադրանքը կատարել է 80 տոկոսի ճշտությամբ, իսկ գործնականն՝ առանց էական անճշտությունների:
Մեթոդաբանությունը և	Տեսական և գործնական ուսուցում տանիքագործական արհեստանոցում և հենակետային օբյեկտներում:

ռեսուրսները	Անհրաժեշտ է ունենալ ուսումնական և նորմատիվային գրականություն, ունիվերսալ և ճյուղային ճոպանների և բեռնակալիչ հարմարանքների տեսականի, բեռների նմուշներ, գործիքներ, գույք, արտահագուստ, պաշտպանիչ միջոցներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 4 ժամ, Գործնական պարապմունք՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել տանիքագործական աշխատանքներում կիրառվող նյութերի և սարքավորումների ճոպանման կատարման կարգը
Կատարման չափանիշները	<ol style="list-style-type: none"> 1) կազմակերպում է բեռների բարձման-բեռնաթափման տեղը, 2) տալիս է ձայնային և նշանային ազդանշանում, 3) կատարում է բեռնակալում գույքային ճոպաններով, 4) ճոպանի օղակը գցում է վերամբարձ մեխանիզմի կեռիկի վրա, 5) հետևում է բեռին ամբարձման և իջեցման ժամանակ, 6) ազատում է բեռը ճոպանից, 7) հանում է գույքային ճոպանը կեռից, 8) վերահսկում է ճոպանման աշխատանքների որակը:
Գնահատման միջոց	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական պարապմունքի ընթացքում կատարած աշխատանքի հիման վրա:</p> <p>Գործնական իրավիճակում արդյունքի յուրացումը կգնահատվի դրական, եթե՝</p> <p>սովորողն ըստ իրեն տրված առաջադրանքի կարող է իրականացնել որևէ տանիքագործական բեռի ճոպանման աշխատանքների ողջ ցիկը՝ բեռների ընդունումից մինչև բեռի ազատում բարձրության վրա:</p> <p>բոլոր աշխատանքները կատարված են համապատասխան գործող նորմերի՝ պահպանելով աշխատանքի անվտանգության և բնապահպանական կանոնները:</p>

Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Գործնական ուսուցում տանիքագործական արհեստանոցում և հենակետային օբյեկտում: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական և նորմատիվային գրականություն, ունիվերսալ և ճյուղային ճոպանների և բեռնակալիչ հարմարանքների տեսականի, բեռների նմուշներ, գործիքներ, գույք, արտահագուստ, պաշտպանիչ միջոցներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Գործնական պարապմունք՝ 20 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՏԱՆԻՔԱՅԻՆ ՆՈՐԱԳՈՒՅՆ ԵՎ ՈՉ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	ՏՔԳ 3-12-012
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողի կողմից տանիքային ծածկույթների նորագույն և ոչ ավանդական նյութերի և դրանց տեղադրման տեխնոլոգիաների վերաբերյալ ճանաչողական գիտելիքների և որոշակի հմտությունների ձեռքբերումը
Մոդուլի տևողությունը	36 ժամ Տեսական ուսուցում՝ 18 ժամ Գործնական պարապմունք՝ 18 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՏՔԳ 03-012-004 «Շինարարական գործ» մոդուլը :
Ուսումնառության արդյունքները	Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է կարողանա՝ 1) ներկայացնել ճանաչողական գիտելիքներ ոչ ավանդական տանիքային ծածկույթների տեխնոլոգիայի և կիրառվող նյութերի վերաբերյալ, 2) ներկայացնել ճանաչողական գիտելիքներ և փորձնական հմտություններ ,Եվրոշիֆերի (Onduline)ե և նրա տեղադրման տեխնոլոգիայի վերաբերյալ, 3) ներկայացնել ճանաչողական գիտելիքներ և փորձնական հմտություններ կոմպոզիտային

	գլանափաթեթավոր և մածիկային նյութերի և դրանց տեղադրման տեխնոլոգիայի վերաբերյալ:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել ճանաչողական գիտելիքներ ոչ ավանդական տանիքային ծածկույթների տեխնոլոգիայի և կիրառվող նյութերի վերաբերյալ
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում պղնձե և պղինձ պարունակող համաձուլվածքներով պատված թերթերից ծածկույթների տեղադրման տեխնոլոգիան, 2) ճիշտ է ներկայացնում կանաչ տանիքների տեխնոլոգիան:
Գնահատման միջոց	Արդյունքի յուրացումը գնահատվում է թեսթային առաջադրանքի միջոցով: Թեսթի յուրաքանչյուր հարցին հետևում է 3 պատասխան, որոնցից միայն մեկն է ճիշտ: Սովորողը պետք է ընտրի ճիշտ պատասխանը: Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, եթե ուսանողը թեսթային առաջադրանքը կատարել է 80 տոկոսի ճշտությամբ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Տեսական ուսուցում տանիքային ծածկույթների տեխնոլոգիայի կաբինետում: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական և նորմատիվային գրականություն, ոչ ավանդական տանիքային ծածկույթների նյութերի նմուշներ , կատալոգներ, տիպարային տեխնոլոգիական քարտեր: Ցանկալի է տեսաֆիլմերի ցուցադրումը համակարգչով կամ թվային պրոյեկտորով:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 6 ժամ:
Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել ճանաչողական գիտելիքներ և փորձնական հմտություններ ,Եվրոշիֆերի (Onduline)ե և նրա տեղադրման տեխնոլոգիայի վերաբերյալ
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) արտաքին տեսքից տարբերում է ,Եվրոշիֆերը, 2) կարող է ստենդի վրա տեղադրել ,Եվրոշիֆերիե մի քանի թերթ,

	3) ճիշտ է ներկայացնում ,Եվրոշիֆերիե կառուցվածքը և նրա առավելություններն ասբոշիֆերի համեմատությամբ:
Գնահատման միջոց	Արդյունքի յուրացումը գնահատվում է թեսթային և գործնական առաջադրանքի միջոցով: Թեսթի յուրաքանչյուր հարցին հետևում է 3 պատասխան, որոնցից միայն մեկն է ճիշտ: Սովորողը պետք է ընտրի ճիշտ պատասխանը: Գործնական առաջադրանքի կատարման ժամանակ սովորողը կատարում է Եվրոշիֆերի Թերթերի փորձնական տեղադրում ստենդի վրա: Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, եթե ուսանողը թեսթային առաջադրանքը կատարել է 80 տոկոսի ճշտությամբ, իսկ գործնականն՝ առանց էական անճշտությունների:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Տեսական և գործնական ուսուցում տանիքային ծածկույթների տեխնոլոգիայի կաբինետում և տանիքագործական արհեստանոցում: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական և նորմատիվային գրականություն, կատալոգներ, տիպարային տեխնոլոգիական քարտեր ,Եվրոշիֆերի Թերթերի և ամրակային նյութերի որոշակի պաշար,անհրաժեշտ գործիքներ, գույք, պաշտպանիչ միջոցներ: Ցանկալի է տեսաֆիլմերի ցուցադրումը համակարգչով կամ թվային պրոյեկտորով:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 6 ժամ Գործնական պարապմունք՝ 6 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել ճանաչողական գիտելիքներ և փորձնական հմտություններ կոմպոզիտային գլանափաթեթավոր և մածիկային նյութերի և դրանց տեղադրման տեխնոլոգիայի վերաբերյալ
Կատարման չափանիշները	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում կոմպոզիտային գլանափաթեթավոր նյութերը (մետաղափղով, ֆոլգոփղով, բիկրոստ, լինոկրոմ, բիկրոպլաստ, բիկրոէլաստ, ստիլիզոլ և նմանատիպեր) ,դրանց կազմը, կառուցվածքը, առավելությունները, կիրառման ոլորտը,տեղադրման տեխնոլոգիաները, 2) ճիշտ է ներկայացնում կոմպոզիտային մածիկային նյութերը (էլամաստ,գեկոպրեն և նմանատիպեր), 3) կարող է ոչ մեծ մակերեսի վրա տեղադրել կոմպոզիտային մածիկ կամ գլանափաթեթավոր նյութ:

<p>Գնահատման միջոց</p>	<p>ունքի յուրացումը գնահատվում է թեսթային և գործնական առաջադրանքի միջոցով: Թեսթի յուրաքանչյուր հարցին հետևում է 3 պատասխան, որոնցից միայն մեկն է ճիշտ: Սովորողը պետք է ընտրի ճիշտ պատասխանը: Գործնական առաջադրանքի կատարման ժամանակ սովորողը կատարում է կոմպոզիտային մածիկային նյութերի տեղադրում սառը եղանակով՝ ոչ մեծ մակերեսով հենաշերտի վրա կամ կատարում է գլանափաթեթավոր նյութերի տեղադրում ժամանակակից տեխնոլոգիաներով՝ կիրառելով փոքր զանգվածի սարքավորումներ և հարմարանքներ: Սովորողը ցուցադրում է կցվանքների և դեֆորմացիոն-նստվածքային կարանների գլանափաթեթավոր նյութերով պատման նորագույն տեխնոլոգիաներ: Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, եթե ուսանողը թեսթային առաջադրանքը կատարել է 80 տոկոսի ճշտությամբ, իսկ գործնականն՝ առանց էական անճշտությունների՝ պահպանելով անվտանգության, հրդեհասանվտանգության և բնապահպանական կանոնները:</p>
<p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p>	<p>Տեսական և գործնական ուսուցում տանիքային ծածկույթների տեխնոլոգիայի կաբինետում և տանիքագործական արհեստանոցում: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական և նորմատիվային գրականություն, կատալոգներ, տիպարային տեխնոլոգիական քարտեր ,ժամանակակից կոմպոզիտային մածիկային և գլանափաթեթավոր նյութերի որոշակի պաշար, անհրաժեշտ գործիքներ, հարմարանքներ, սարքավորումներ, գույք, պաշտպանիչ միջոցներ: Ցանկալի է տեսաֆիլմերի ցուցադրումը համակարգչով կամ թվային պրոյեկտորով:</p>
<p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</p>	<p>Տեսական ուսուցում՝ 6 ժամ, Գործնական պարապմունք՝ 12 ժամ :</p>